

գարնել տուաւ փողերը, և խօսեցաւ այսպէս առ ապստամբս.

— Յանուն Աբգաթից ամենազօր թագուհոյն, որուն շնորհեց Ներու զօրութիւն գաւազանի ու յաղթութիւն սրոյ, ձեզ քաղաքացեալդ ու պաշտպանողացդ Պարսիբայ, առաջարկեալ է զինադադար այս վայրկեանէս մինչև վաղուեան առաւօտ, որ է երեսներորդ օր Տանա ամսոյն: Այդ օր նուրիւնն որ կըսպասէք յարեւելից, զեռ վեց օր պէտք է որ հասնի Քարբոնի մօտ: Այսպէս յուր բերին լրտեսներն. մտածեցէք ուրիմն, Կիմացքեան կանխաւ որ այս միջոցիս մէջ պիտի պաշարուի Պարսիբայ սրով ու հրով: Աւրեմն ընդունեցէք զինա-

դադարը, և մէջընէդ ով որ կ'ուզէ, բաւական է որ Քիրբատ Աբգատայ մեծերէն ըլլայ, գայ 'ի բանակցութիւն յարքունիս, Բարեւոնի գլխաւորաց հետ: Լսէ թագուհին իր հակառակորդաց կամքը ու մտաքը և ինչ որ կը պահանջին արիւնհեղուքի հետ կենտրու համար: Ըսէ ինքն այ իր պահանջածը, և թէ ինչ բան կրնայ շնորհել ձեզ: Ազատ ու նստրական են Պարսիբայի պատ, գամաւորքն. անիծեալ ըլլայ 'ի Գից, ո՞վ որ զինադադարման ատեն ջանայ վնասել իր ամենէն ատելի թշնամուոյն:

Կը շարունակուի:

ՄԵՆՆ ՆԵՐՍԵՍ ՊԱՐԹԵՆ

Ա. Մանկուռքիւն Ներսիսի. — Սնուռնդ և դաստիարակուռքիւն. — Աշխարհիկ վարքն. — Մինչ նահատակութեամբ պայծառացեալ յաշխարհէ փոխեցաւ Ս. Յուսիկ, յանիրաւի սպանեալ 'ի Տիրամայ, թողուց 'ի Հայաստան երկու անարժան զաւակ՝ զՊայ և զԱթանա, զինէս. և 'ի վերջնոյս՝ որպէս 'ի փոյց՝ բուսաւ գեղեցիկ շառաւիղն Ներսէս, 'ի զառն արմատոյ գեղեցիկ պտուղ, և իւր հարցն, մանաւանդ Սրբոյն Գրիգորի շաւղացն հետեւելով զրուեսցաւ 'ի հրահանգս 'ի եկեալիս կապաղովկեցւոց: Այս Աթանազիւնէս առած էր Տիրան արքային քոյրն՝ որ է Բամբիչն առուամբ, և անկէ ծնաւ զՆերսէս: Բարձրահասակ էր Ներսէս, ինչպէս կը ստօբազրեն բուզանդ և Մեսրոպ Երէց, գեղեցիկ զիմօք և հերթապանձ. և իւր եկեալիս եղած ժամանակն սիրելի եղած էր ամենուն, մասնաւորապէս իւր վարդապետացն: Բայց յետ աւարտելու իւր ուսումն 'ի եկեալիս՝ անցաւ 'ի Իւզգանդիոն, և հոն աշխարհական կենաց մտաւ՝ առնլով իւր կին մեծ իշխանի մը՝ որ Ասպիոն կոչէր, դուստրն. զայս այսպէս կ'ըսէ մեզ Խորնոյ ծերու.

նին, և չի նշանակէր այդ Ասպիոնի զըստեր անունն՝ որ եղաւ կին Ներսեսի. բայց թուի թէ Խորնուցին յայսմ կը խոտորի 'ի ստոյգ պատմութենէն, և կը շփոթի ուրիշ ամուսնութիւն մը՝ ընդ Ներսիսին. վասն զի Արշակ Թագաւորն առաւ կին մեծ իշխանի մը դուստր՝ որ է Արլաբիտս, (որուն վրայ պիտի խօսինք յետոյ), իսկ բուն վարուց պատմին, Մեսրոպ Երէց, կ'ըսէ թէ Ներսէս յետ ուսանելոյ 'ի եկեալիս՝ ամուսնացաւ, առնլով իւր կին Մամիկոնեանց ցեղէն Սանդուխտ անունով օրիորդ մը, որ յետ երեք տարւոյ կը վախճանէր՝ թողլով յաշխարհի որդի մի Սահակ առուն, Յետ մահուան ամուսնոյն ալ ուժացաւ Ներսէս յաշխարհական ամուսնութենէ, և երկրորդ վիճակ մ'աւ ընտրեց անձին, թէպէտ յայսմ ալ պիտի չյարատուէր. ընթացաւ առ Արշակ Թագաւորն՝ որ կը նստէր 'ի Ծափս, և հօն իր պայծառ տեսլեամբն արժանի եղաւ թագաւորական սենեկապետ ընտրուելու. առատ գովասանք կը յճառէ բուզանդ յայսմ պաշտաման Ներսիսի բրած ազգեցութեան վրայ. Մեսրոպ Երէց կը կոչէ զինքն Սենեկապետ

և Ամենապետ արքայի, և Բուզանդ կը յաւելու. և՛ որ ինքն Ներսէս էր իբրև թիկնապահ թագաւորին, վասն զի սուրը ինքն կը կրէր: Այս հասակին և պայտասման մէջ՝ ալ ցուցուց Ներսէս իր այն մեծամեծ ձիրքերն՝ որոնցմով յետոյ հայրապետական ամբողջ պիտի շքեղացունէր. արդարութիւն և ողորմածութիւնն իրեն սեպհական առաքինութիւնքն էին, և կրնար նաև թագաւորական պերճութիւն ալ վայելցնել իր պայծառազարգ և հասակագեղ կերպարանքն: Ազգեցութիւն ըրած էր ամենուն վրայ, և նոյն իսկ արքունիք միայն Ներսէս մի ունէին՝ որով կրնային պարծիլ իրաւացի մեծութեամբ մը: Հասու հուակ ուրեմն այն վայրկեանն՝ յորում ազգն բովանդակ պիտի յայտնէր հրատարակու՝ Ներսիսի վրայ ունեցած մեծ համարումն, և բոլոր Հայաստան միաբերան ընդունէին զինքն իրենց հայր և դաստիարակ հոգեւոր:

Բ. Կարողիկոստաշիւն Ներսիսի. — Եկեղեցւոյ առաջին դարուց որին և հարկն շարունակեբ էր և զրեթէ կը շարունակէ ցայսօր հայկական ազգին գաղափարին մէջ, մինչդեռ այլ եկեղեցիք, Յոյնք և Ասորիք, կանխաւ լուսաւորեալք էին և բաւ ժամանակին պիտոյնց կարողք էին զիրենք կառավարել: Այս է ցեղական յաջորդութիւնն. որ թէպէտ առաքելական գարուց մէջ ալ չէր գործածուած, բայց կ'երևի թէ մանր գաւառք և ժողովուրդք, որոնք չէին կրնար յայլ կողմանց հասցունել իրենց հովիւս, կը ստիպէին իրենց նախորդին սերունդը յառաջ վարել. վասն զի գոյր նաև ամուսնական ազատութիւն՝ որով երէց մը կարող էր իր որդւոյն ալ յանձնել աստուածական իշխանութիւնն. այսպիսի յաջորդութիւն մը երկրորդ ատեն շարունակեց յազգիս, և Պարթեւական ազգն՝ որպէս զՂևաթականն ՚ի Հրեայս, պահեալ էր միակ նուիրական ցեղ յաւաճորդութիւն Հայաստանի. իսկ միւս ցեղք որդւոց որդի դրահանայութիւն կը սերէին,

ինչպէս յայտնի է մինչև ՚ի մեր աւուրս երևցած այս կերպ քահանայութենէն, որում կը վկայեն նաև մեր նախնի յիշատակութիւնք իւրաքանչիւր դարուց, 1100, 1200, 1300, 1400, 1500 և այլն, որոնց յիշատակարանքն ողջ կեցած են: Արդ այս մեր Պարթև ցեղակարգութիւնն թէպէտ երբեմն երբեմն կորսուած է դանազան կողմնակի ճիւղերով, բայց միշտ հասուցած է ՚ի գահ քահանայապետական արժանաւորան, ձինք մինչև ՚ի սուրբն Ներսէս Շնորհաւի՛ս ինքն Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որուն վարքն ալ ու ժամանակն առատ նիւթ կու տայ քննադատից, ՚ի պարթևական ցեղէ էր, և նոյն ցեղին կարգն շարունակեցին իւր որդւոցմէ անոնք՝ որ աշխարհական կեանք ալ ունեցան, ամուսնանալով թագաւորական ցեղին հետ: Բայց որչափ ալ ցեղն շարունակեց, սակայն քահանայապետական ամբողջ կարգն ու յաջորդութիւնն ոչ է այնպէս յստակ ՚ի Ս. Գրիգորէ մինչև ՚ի մերս այս Պարթև Ներսէս: Վասն զի հասնելով մինչև ցՍ. Յուսիկ, որ երեք տարի գահակալեց, յետոյ պարթևական ցեղէ չգտնուելով հասուն հասակաւ անձ մը ՚ի գահն, դարձաւ ամենուն աչքն ՚ի Ներսէս ՚ի սենեկապետն Արշակայ. բայց չափաւոր հասակ չունենալուն համար՝ որիչ մը ժառանգեց ամբողջ փառներսեհ, որ էր, կ'ըսէ խորենացին, յՈւշտիշատից Տարօնոյ. զնոյն կը հաստատեն նաև հայկական եկեղեցւոյ Գաւազանագիրք:

Գ. Սոյն ժամանակի եպիսկոպոստունք ՚ի Փոքր Հայս. — Չորս կամ երեք տարի նստաւ փառներսեհ յօտար ցեղէ յաթոռ սրբոյն Գրիգորի. և յետ այնր չգիտեմք որ ամթիւ կամ ինչպէս կարգն եկաւ Ներսիսի, որուն արդէն վիճակեալ էր գահն իբրև Պարթև յազգէ Լուսաւորիչն: Եւ յետ բազում դժկա-

1 Պարթևական ցեղին կարգին վրայ երկայն սեղեկութեան ցանկացողք՝ ընթանուող կրնան Եսթրաօն և Պարսկայ խր մտատեան:

մակութեան զոր ցուցուց սրբակեանցն
 Ներսէս, յաղթող եղու ազգին միահա-
 ւան կամօն. և սկսան զՆերսէս մերկա-
 ցունել յայխարհական և ՚ի զինուորա-
 կան զգեստներէն, և այն վարսագեղ
 գլուխն անջքեցնել կամ փղբրել՝ ըստ
 եկեղեցական օրինի, մինչև շատք սկսան
 արտասուել որպէս թէ այնպիսի գե-
 ղեցկութիւն մը կը յափշտակուի յաշ-
 խարհէ և կը հեռանայ, կ'ըսէ Բուզան-
 դայցին մեր: Բռնութիւն մը, եթէ հա-
 ւատալու է մեր պատմիչին, կը հարկա-
 ւորէր զՆերսէս կամայ և ակամայ
 յանձն առնուլ այս պաշտօնը. բայց
 մեզի կ'երևայ որ բուզանդական փիլա-
 գրին զրոյցքն շատ ինքնաստեղծ կէ-
 տեր կը ներկայացընեն, զոր աւելի ման-
 րամասամբք պիտի տեսնենք յառաջի-
 կայս. հօս ներելի ըլլայ մեզի ըսել
 միայն որ Ներսիսի պատմիչքն ճամար-
 տակութիւն շատ սիրած են, իսկ ՚ի
 մասնաւորի Բուզանդ՝ բերանացի սեր-
 տած կ'երևի սուրբ Բարսղի վարքն:
 Յետ այս բռնադատ խուզման հերաց
 կը կանչուի ծերունի եպիսկոպոս մը
 փաւստոս անունով՝ որ ձեռնադրէ զՆեր-
 սէս սարկաւազ: Ո՛վ է այս փաւստոսն,
 Բուզանդ կը նշանակէ մեզի փաւստոս
 անուամբ եպիսկոպոս մը, որ ՚ի մա-
 հուան սրբոյն Ներսիսի յուղարկաւոր
 կ'ըլլայ եկեղեցական խմբովն, և թե-
 րև այս միակփաւստոսն ըլլայ զոր կ'ըսէ
 Բուզանդ թէ թելակալ էր Ներսիսի ե-
 պիսկոպոսպետին. բայց հարկաւ այս
 չէ մեր վերոյիշեալ փաւստոսն, որ ծե-
 րունի կը կոչուի Ներսիսի սարկաւազու-
 թեան ժամանակ: Բայց սոյն միջոցներս
 կը յիշէ Ս. Բարսեղ իր ձի, ձիԱ, ձիԲ
 նամակաց մէջ, զոր գրած էր առ Մելե-
 տիոս եպիսկոպոս Անտիոքայ, առ Թէո-
 գոտոս եպիսկոպոս Նիկիպօլսոյ և առ
 Պիմենիոս Սասաղացւոց եպիսկոպոս,
 փաւստոս անուամբ ձեռնադրութիւն
 յափշտակող եպիսկոպոս մը. և գան-
 դատելով Անթիմոս եպիսկոպոսին հա-
 մար կ'ըսէ թէ՛ երբոր փաւստոս մեզմէ
 շյաջողեցաւ եպիսկոպոսութիւն ձեռք
 բերելու՝ գիմեց առ Անթիմոս և նա

միամտաբար տուաւ, և անով, կ'ըսէ,
 Հայաստան լիցուեցաւ շիթիք: Կա-
 րելի է արդեօք որ այս փաւստոսին հետ
 նոյնացընենք զյիշեալն ՚ի Բուզանդայ-
 բայց ժամանակազրութիւնն չիներէր
 մեզ զայս վճռելու. միայն խնդրելի այն
 է՝ թէ ինչու սուրբ Բարսեղ ձեռնադրու-
 թիւն չտուաւ այս փաւստոսին:

Դեռ Եւսեբիոս էր յաթուռն Կեսա-
 րիոյ կապապագովկեցւոց, և այն կնճռեալ
 նիւթքն պաշարած էին նոյն պատրիար-
 զական աթոռն, երբ նախարարքն Հա-
 յոց ուղեցին տանել զՆերսէս ՚ի Կեսա-
 րիա՝ որ առնու անտի ձեռնադրու-
 թիւն, ինչպէս սովորութիւն էր Հայոց:
 Արշակայ հրովարտակն և իշխանաց բազ-
 մութիւնն՝ որ տանէին զՆերսէս՝ բացին
 իրենց առջև Կեսարիոյ դռներն. և փու-
 թաց Եւսեբիոս ապ ձեռնադրութիւն,
 և արձակել զնա ՚ի Հայս: Բայց հօս այ
 մեր Բուզանդացւոյն գրիչն անտանձ
 կ'արշաւէ, և կարծես Ս. Բարսղի պատ-
 մութիւնը կը թարգմանէ մեզի. Հո-
 գւոյն սրբոյ ազանակերպ թռչին եր-
 կուքին զլիտն վրայ՝ միոյն ՚ի միւսն
 անցնելով: Իսկ մեծ իշխանքն որ ուղե-
 կից էին սրբոյն ՚ի Կեսարիա՝ էին կրթ-
 կին իշխանքն երկուց Ծոփաց, և Ռըշ-
 տունեաց և Սիւնեաց, Շիրակայ և Ար-
 շարունեաց, և Ամատունեաց. որոնք՝
 յետ հանդիսին վճարման՝ առին իրենց
 նորապակ կաթուղիկոսն, և փառաւոր
 շքեղ պերճութեամբ սկսան դառնալ ՚ի
 Հայս. և Արշակ՝ որ ուղեկից չէր ընդ
 Ներսիսի՝ ընդ առաջ ելաւ անոր Առիւծ
 լեռան մօտերն. (Առիւծ գաւառը կը
 յիշէ Խորենացւոյն աշխարհազրութիւնն
 ՚ի Բարձր Հայս). և հօն սիրոյ քաղցը
 ընդունելութեամբ պատուելով թագա-
 ւորն զկաթուղիկոսն՝ կը բերէ զնա յիւր
 սեփեհական տունն, որ ժառանգէ իր
 ազգին վերատեսչութիւնը կատարեալ
 և արժանապէս փառք:

Մտաւ նորընտիր կաթուղիկոսն յիւր
 սեպհականութիւն: Բայց ո՞վ կ'ընայ գծել
 մեզի այս ժամանակիս հայկական աշ-
 խարհագրական ճիշդ ու որոշ սահ-
 մանքն. Բուզանդ հնդեպոստան գաւառ

կու տայ Ներսիսի բաժին, որոնց մէջ զլիաւորներն էին, կ'ըսէ ինքն, Այրաբատ, Գարանաղէ, Եկեղեցաց, Տարօն, Բզնունիք և Ծոփք. և կը յաւելու « և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնորք » . որով կ'իմացուի որ Ներսիսի հովուական բազուկն կը տարածուէր միայն 'ի Մեծ Հայո. բայց չկարարողքոք հայ ազգ և ժողովուրդ. 'ի փոքր Հայս, և որուն հպատակ էին անոնք: Հօս ահա թողլով առ ժամանակ մի զմերս Ներսէս, Հայաստանի երկրին բաժինքն տեսնենք ըստ եկեղեցական սահմանադրութեանց, կըզդիտս Պողոտէոս յոյն բազմահմուտ աշխարհագիրն, որ կ'ապրէր փրկչական թուականին Բ. դարուն առաջին կիսուն, իր շատ գործոց հետ մեզի աւելի հետաքրքրական աշխատութիւն մը ըրած է, քննելով և կարգելով նաև Հայաստանի աշխարհագրութիւնն, որ թէպէտ լոկ անուանց ցանկ մ'է, բայց աշխարհագրական ուսումն անով ալ զուարճալի կրնայ մտածուիլ: Արդ ինքն Պողոտէոս յերկուս կը բաժնէ զՀայաստան, 'ի փոքր և 'ի Մեծ, և անոնց գաւառաց ցանկը կարգաւ կը դնէ մեր առջև. յորոց բազումք մեզի անժանօթ են հիւսայ, կամ օտար հնչմամբք այլափոխեալ: Սակայն ըստ սահմանակցութեան աւելի ծանօթ եղաւ Բունաց և Հռոմայեցւոց փոքր Հայք քան զՄեծն. և այս բանիս համար շատք 'ի հնոց իսկ ճանարարհորդեալ են 'ի փոքրն, բայց ոչ որ 'ի Մեծն. և Ստարառն երեկի աշխարհագիրն երջանիկ երկիր կը կոչէ զփոքր Հայս, այլով մասամբ հշտագոյն ըլլալով քան զՊողոտէոս իսկ: Այս ընդհանուր բաժանման հետ կան միանգամայն մանր վիճակք և բաժինք՝ առանձին հայկական անուամբք, և այլք յունական յորջորջմամբ. զոր օրինակ Ս. Բարսեղ իր նամակաց մէջ երկու ուրիշ բաժին կը նշանակէ մեզ հայկական վիճակին մէջ, յորոց զմին կոչէ Գաղթականութիւն Հայոց (Κολωνία Ἀρμενίας) կամ Կողոնիա Հայոց, և զմիւսն՝ Չորեքքաղաքեան Հայք (Τετραπόλις Ἀρμενιά): Գալով եկեղեցական պահմանաց, աւե-

լի խրթին մթութիւն մը կ'ընծայեն մեր պատմագիրք, և երբեմն նաև հակառակութեան ոգի մը ցուցնելով կ'ուզեն զիրենք ինքնազուխ կամ անզուխ անուանել. սակայն որչափ մեզի արտաքին պատմութիւնն կը ներէ, այս ինքնօտարագոյի յոյն պատմիչք, կը տեսնենք որ կրկին Հայաստանն ալ ենթակայ էր իշխանութեան Կեսարիոյ Կայսրացուկացոց: Եւ չհամարինք զփոքր Հայս օտար 'ի հայկական պատմութենէ և յոգոյ. վասն զի հօն ալ շատ դէպքեր անցած են եկեղեցական մասամբ՝ զոր կամաց կամաց սկսինք մաղել: Աւելորդ է ոմանց պնդելն թէ Հայք ոչ ընդունէին զձեռնադրութիւն 'ի Կեսարիոյ, այսինքն Հայ կաթողիկոսունք. այլ յայտնի նոյն իսկ մերքս կ'ըսեն թէ « 'ի Լուսաւորչէն մինչև 'ի Սահակ հայրապետն 'ի Կեսարիայ ձեռնադրէին Կաթողիկոսունք. յորժամ եղև ժողով ֆաղիկեդոնի՝ բաժանեցան Հայք 'ի Յունաց » . այս ստոյգ վկայութիւն է. բայց մեր նպատակն այս չէ: Որչափ որ տեսննք զՆերսէս որ փառաւորապէս ձեռնադրեալ յԵւսեբիոսէ՝ զոր մերս Բուզանդ հելլենական առատութեամբ կը կոչէ « Կաթողիկոսաց Կաթողիկոս », դարձաւ 'ի Հայաստան, չմոռնանք որ 'ի փոքր Հայս ալ կային եպիսկոպոսք Հայ ազգաւ, ինչպէս նաև հայ ժողովուրդ:

Ասոնց կարգն ու շարքն մեզի անձանօթ կը մնայ, սակայն 'ի նոսա երեւելիք անպակաս էին:

Եւսեբիոս Կեսարացին կը յիշատակէ Մերութեան եպիսկոպոս մի (զոր յունական կոչմամբ կ'անուանէ Μεραζάνης — Μερουζάνης — Μαρουζάνης — Μεροναζάνης — Μεροναζάνης) որուն եպիսկոպոսութեան ժամանակ Գիոնեսիոս Աղեքսանդրացին կը գրէ առ Հայս թուղթ մը Յաղագս Ապալիսարութեան. և արդ այս Գիոնեսիոսի կենաց վերջը կը հանդիպէր, յետ բազում հալածանաց զոր կրեց յաւուր Գեկոսի, յամին 264 կամ 265, տասնութօթն կամ տասնութ տարի եպիսկոպոսութիւն ընելէն յի-

տոյ . արդ իրեն եպիսկոպոսութեան
աարիէն (որ եղաւ 'ի 247) մինչև ցմահն՝
կ'ընկնայ գրեթէ տասն տարի յառաջ
քան զԾնունդ մերոյս Լուսաւորչին
(257) :

Յիշի արդարև 'ի վարս թաղէոսի առա-
քելայ , թէ յետ քարոզութեանն թողուց
'ի Հայս յիւր աշակերտացն Զաքարիա
անուամբ մին , և թերևս պահուած ալ
էր քրիստոնէութիւնն շարունակաբար
յամբողջութեւ մինչև ցտորն Գրիգոր-
բայց անշուշտ ոչ էր բուն 'ի մեծ Հայս ,
այլ 'ի սահմանակցութեան Ասորոց ,
ուր և թաղէոս կը քարոզէր գրիստոս
(եթէ ստուգագոյն համարինք Լաբուր-
նիայի վարդապետութեան թաղէոսի
գրոց ասորի բնագիրն) : Յետոյ ինչենք
մինչև 'ի գումարումն Նիկիոյ Ս . Ժողո-
վոյն (325) որ տարի և վաղարշապա-
տու ժողովոյն գումարումն 'ի Հայս զուգ-
ընթանայ ըստ մեր պատմաց , որ և
հաւաստի է . Ս . Գրիգոր զրկեց յայն
ժողովն Նիկիոյ զՍտտակէս . բայց նոյն
ժողովոյն ցանկն կը յիշէ և զայլս 'ի փոքր
և 'ի Մեծ Հայոց . 'ի փոքր Հայոց՝ Եւլա-
լիոս Սեբաստիոյ և Եւիթիոս Սատաղա-
ցոց . Իսկ 'ի Մեծ Հայոց՝ Արիստակէս
(Αριστοάκης) և Կոիտէս Իսկ մեր ձեռա-
գիրք և նախնիք որ թարգմաններ են այս
ամբողջ Նիկիական հարց ցանկն , այս-
պէս կը դնեն . « Եւվաղիոս ? 'ի Սաբամ-
դէ ? Եւթիոս Սատաղէ . — Ի Մեծաց
Հայոց ազգէ՝ Առիստագէս Հայոց , Առ-
սիկէս (թերևս յոյնն Αρσιτης) 'ի Պէէն-
պողէ ? Եւտիթիանոս 'ի յԱմասէ , Հեղի-
պոս 'ի Կոմանէ , Հերակլիոս 'ի Չեղու-
վէ ? » : Ասոնք են զանազան եպիսկոպո-
սունք որ ներկայ գտնուեցան 'ի Հայոց՝
'ի ժողովն Նիկիոյ , որոնցմէ հայկական
պատմութեան ծանօթ է միայն Առիս-
տակէս : Բայ 'ի ասոնցմէ՝ Գամրաց կող-
մանէ ալ կը յիշուին 'ի նոյն ցանկս Եւ-
պիղիոս (Յուսիկ?) 'ի Կոմանայ , նոյնպէս
Եւստաթիոս մ'ալ , Կաղ 'ի Կաղ ընթա-
նալով՝ մեր Հայոց պատմութեան այս
մասն և ժամանակին եկեղեցական
շարքն հայրապետաց և եպիսկոպոսաց ,
կ'ուզենք հասցընել մինչև 'ի ժամա-

նակս Ս . Բարսղի , որ ծնաւ 'ի 320
թուականին , և մեռաւ այն տարին՝ երբ
մերս Պարթէն ներսէս դառնայր յաքսո-
րանաց (379) : Բարսղի ժամանակ բա-
զում չիոթից ենթակայ էր նաև Հա-
յաստան , գոնէ միայն փոքր Հայք . յո-
րում շատ անգամ կը գանդատի որ բա-
րեկարգութեան համար կը ստիպուի
ձմեռ ժամանակ հայկական ձիւնախա-
ղաղ լեռները կտրել անցնիլ , և ցածու-
ցանել ամենայն աղմուկ : Սակայն Կե-
սարիոյ վիճակն և նոյն ժամանակի ա-
ղանդոց և հերձուածոց գայրացումն
պատճառ տուաւ Ս . Բարսղի կենաց
տաղանայներուն և հիւանդագին ան-
ցունելուն : Այսպիսի հերձուածոց բոյն
կամ թէ ըսեմ առիթ մ'ալ եղև Սե-
բաստիա և այն բաժինքն . բայց 'ի մաս-
նաւորի Եւստաթիոս անուամբ եպիսկո-
պոս մը . զոր շատ խարդախ և խորամանկ
կը նկարագրէ սուրբն Բարսեղ . և որ հեր-
ձուածէ հերձուած սահելով քակուե-
ցաւ 'ի միութենէ եկեղեցւոյն Բարսղի ,
դատապարտեցաւ 'ի Գանգրեայ ժողո-
վին ինքն և իր մուր սկզբունքն : Ասոր
վարքը գրեթէ մանրամասն կ'ընանք քա-
ղել 'ի թղթոց Ս . Բարսղի , զոր գրեց առ
զանազանս , և որոց ժամանակագրա-
կան ցանկն կ'ընթանայ 'ի 357 թուէն
կամ լաւ ևս 'ի 368 թուէն մինչև ց377
թուականն , Մե՛նք ժամանակագրական
ցանկն չենք նայիր , որպէս զի կարող
ըլլանք այս անձին վարքը քաղել :
Ս . Բարսեղ , յետ իր ամեն վիճմանց և
հակառակութեանց , թուղթ մը կը գրէ
առ Արեմտեայս յամին 377 , յորում
մանր կը նկարագրէ կապապողովական
աթոռոյն կրած նեղութիւններն 'ի հեր-
ձուածողաց : Թէպէտ յեկեղեցական
պատմաց ոմանք տարակուսած են այս
Եւստաթիոսի Սեբաստիոյ եպիսկոպո-
սին Հայ ըլլալուն , ինչպէս թիլմնդ և
այլք , բայց Ս . Գրիգոր Նազիանզու յայտ-
նապէս կը կոչէ զնա « խուժաղուծն
Հայ » , և կը վկայեն թուղթք Բարսղի .
և այս բանիս մերոց պատմագրաց լը-
ուութիւնն չի զօրեւր , վասն զի այս ժա-
մանակիս բովանդակ պատմութիւնն

լուծ է և անխօս, միայն մեզի օժան, գակ պիտի առնունք առ այս զմեր Բուզանդ, որուն անունն թէպէտ ստախօս համաւեալ է, բայց մեզի շատ ճշմարիտ դէպքեր կ'աւանդէ. և յիրաւիքըն նեւու արժանաւորք, բայց միայն տեղ տեղ պէտք ենք զԲուզանդ փոխադրել 'ի փոքր Հայս, Սեբաստիոյ փոքր Հայոց գաւառ ըլլալն կը վկայէ և Սորաբոնի աշխարհագրութիւն, այն Սեբաստիայն որ յառաջն Գիտագոյիս կոչէր 'ի Պոմպէոսէ և այլ յառաջ կարիւռաւ իսկ սոյն Եւստաթիոսի պատմութիւնն կ'ընեն մեզի և Սոկրատ եկեղեցական պատմիչն և Սոզոմենոս, և իրենց ըսածին նայելով շատ հանճարով անձ մ'էր այս Եւստաթիոս, բայց բնութեամբ քիչ մը հակամէտ 'ի թիւր կարծիս և 'ի ծուռ վարդապետութիւնս: Արդ զայս Եւստաթիոս մենք Հայ կը համարինք, ինչպէս նաև համարուած է Պրոքրեսիոս մ'ալ, թէպէտ չեն սներ 'ի բուն 'ի խոր Հայս, այլ առաւել յունական օղն ծածած և կլի մային վարժած: Առաջին օրինակն որ զԵւստաթիոս Հայ կ'ընէ, և այն թուղթն զոր առ Արևմտեայս կ'ուղղէ սուրբն Բարսեղ, ինչպէս վերն ըսինք, յամին 377, և այն թղթոյն մէջ յետ մանրամասն թուելու արիտական հերձուածոյն ըրած կոտորածն, կ'անցնի ստորագրելու մեր Եւստաթիոսը, և ողջ կը դնենք հօս այն թուղթը լիովին գաղափար մը ընծայելու համար մեր նիւթին. Ե Մի և յայնցանէ որ արտմութիւն մեծ ածին զմեզ' է Եւստաթիոս, 'ի Սեբաստիոյ փոքուն Հայոց, որ երբեմն աչակերտել Արիոսի, և յորժամ նա ծաղկէր յԱղեքսանդրիա՝ զարաչար յաղագս Միածնին ժայթքեալ հայհոյութիւնս, և սա զկնի ընթանայր նորա, և ընդ հաւատարիմ աչակերտս համարեալ էր: Իբրև դարձ արար յերկիր իւր, երանելոյն եպիսկոպոսին Հերմագինեայ՝ որ զարապիստութիւն նորա յանդիմանեաց, ետ զուղիղ հաւատոյ խոստովանութիւն. և այսպէս ընկալեալ նորա զձեռնադրութիւն, զկնի վախճանի եպիսկոպոսին ընթացաւ 'ի

Կոստանդինուպոլիս առ Եւսեբիոս. ապա անդուստ մերժեալ՝ եկն 'ի հայրենիս իւր, և թագուցեալ զթիւր միտո իւր՝ մինչև եհաս յեպիսկոպոսութիւն, և անդէն գրեաց նպովս ընդդէմ համագոյակցութեան Որդւոյն 'ի Ժողովին Անկիւրիայ: Անտի դարձաւ 'ի Սեւեկիս և արար անդ զայն՝ զոր դիտեն քաջ մենեքին. 'ի Կոստանդինուպոլիս եկաց 'ի կողմն հերետիկացնս :

Ասիկայ կրնայ համարուիլ այն անձին վարուց համառօտ ընթացքն, բայց զմեծագոյնն կը լռէ սուրբ Բարսեղ. իսկ Սոզոմենոս շատ տեղ աւելի արդարացընել կը ջանայ զայս անձն, և աւելի պատրուակելով կը խօսի. ինչպէս, կ'ըսէ, սուրբն Անտոն և Պօղոս միայնակեցաց դուլքը եղան յեղիպոսս, այսպէս 'ի Հայաստան և 'ի Պափագոնիա եղաւ Եւստաթիոս սեբաստացին. ինքը սովորեցուց, կ'ըսէ, թէ ինչ վարք պիտի ուցունեն, և որ կերակրներն պիտի ուտեն և զգրս՝ ոչ, ինչ զգեստ պիտի հագուին, և ուրիշ ասոնց նման բաներ. մինչև ոմանք կը կարծեն, կ'ըսէ, թէ սուրբ Բարսեղի անուամբ մեր ունեցած ներանձնական վարուց վրայ գրած ճառերն՝ ինքն շարադրած ըլլայ:

Եթէ այսպէս ընցունէր Սոզոմենոս իր պատմութիւնն՝ աղէկ զովասանք կրնայինք սեպել, և դրեթէ սուրբ Բարսեղի և մերոյս ներսիսի պատուոյն կէտն յափրշտակած կ'ըլլար այնպիսի արդիւնական կարգաւորութեամբ. բայց ոչ է այսպէս. յետ այսպիսի գործոց՝ կամաց կամաց սկսան յերևան գալ Եւստաթիոսի թերութիւնքն, զորս Սոկրատ պատմագիրն յոյն կ'ըսէ իր եկեղեցական գրոց մէջ. Եւստաթիոս 'ի Սեբաստիոյ Հայոց և ոչ 'ի պատասխանատուութիւն անձին եղև ընկալեալ, զի յառաջնմէ իսկ 'ի հօրէն իւրմէ յԵւլայիոսէ՝ յեպիսկոպոսէ Կեսարիոյ Կապպադոպկեցոց ընկեցաւ նա, քանզի զգնեոյր հանդերձ անպատշաճս քահանայութեան: Յետ այսորիկ և 'ի Ժողովին Գանգրեսոյ Պափագոնիոյ՝ դատապարտեցաւ, զի յետ անկանելոյ 'ի Կեսարիոյ Ժողովին՝

բաղում ինչ գործեաց հակառակ եկե-
ղեցական կարգաց. արգել զամուսնու-
թիւն, և 'ի կերակրոց հրաժարել ուսու-
ցանէր, և զբաղումս յամուսնացեղոց՝
բաժանեաց յանկողնոց, . . զժառայս 'ի
պատճառս աստուածպաշտութեան 'ի
տեարց իւրեանց անյատեաց. ինքն զի-
մաստասիրի ձև արկանէր զանձամբ, և
տայր հետևողացն իւրոց ազանել հան-
դերձս օտարոտիս, և առնէր՝ զի գեր-
ժուցուն կանայք. և զկիրակէս պահել
հրամայեաց ու Չասոնք և ասոր նման
գեռ ուրիշ մոլորութիւններն ալ կը նշա-
նակէ ինքն Սողոմոնոս պատմիչն. բայց
կը յաւելուես, թէ չեն ասոնք բուն ի-
րեն մոլորութիւններ, այլ ոմանք կը
կարծեն թէ իրեն աշակերտացն ըլլան:
Սակայն, ինչպէս կ'երևայ, ինքն ընկա-
լաթողոյն և տեղն զրուեցաւ այն Մեղի-
տիոսն՝ որ յետոյ յԱնտիոք փոխադրուե-
լով՝ 'ի կոստանդնուպոլսիս վիստանե-
ցաւ: Եւստաթիոս մեծ հանճար ունէր.
Թէպէտ ոչ այնչափ զօրնաւոր պերճա-
խօսութիւն, սակայն ձգիչ և համողիչ
խօսակցութեամբ մը միշտ կը քարշէր
յինքն զունկնդիրս, մինչև շատ անգամ
զբաղումս կրցեր էր դարձնել 'ի սուրբ
վարս, և անգամ մ'ալ չկարենալով եր-
կու աղապք՝ այր և կին՝ համոզցնել որ
իրենց խոտորնակի ճամբէն ետ կենան,
զանդատելով գոյեց. և Մինչև հիմայ կըր-
ցայ զօրինաւոր ամուսնացեալս իսկ հա-
մողել 'ի ժուժկալութիւն, հիմայ և ոչ
զապօրինաւորսն կարենամ ետ կեցընել
իրենց գէշ ճամբէն ու իրեն սխալման
մէջ ալ յամառ չէր. այլ երբոր լսեց որ
իրեն վրայ հաղուստի ամբաստանու-
թիւններ կ'ըլլուին, փոխեց ձևը, և սս-
վորական քահանայից զգեստը հագաւ
Քաղում ժողովոց մէջ լսուեցաւ Եւստա-
թիոսի անունն, 'ի Սեկեւեան ժողովին
պաշտօնէն ընկաւ ինքն Եւստաթիոս և
իրեն հետ Ելպիտիոս՝ որ էր եպիսկո-
պոս Սատաղացոց Մակեդոնիոյ. (Թըղ-
թոց օրինակներն այսպէս ունին, բայց
որովհետև Սատաղիա տեղ մը չի յիշուիր
'ի Մակեդոնիա, տպագրողքն կ'ախորժին
'Αρμενία կարգալու որ է Հայաստան. ք.

րով ուրիշ անուն մ'ալ կը ստանայ հայ
պատմութիւնն): Եւ այս անունն մնաց
իր հետևողացն որք կոչեցան Եւստա-
թեանք. և ըստ Քարաղի մտաց՝ համազօր
կը համարուէին Եւստաթեանք և Պաւլի-
նեանք. որով մեզի ուրիշ կասկած մը
կը ծագի, որ չըլլայ թէ Սողոմոնո-
սի ըսածին պէս, սուտ ամբաստա-
նութիւն մը ըլլայ Եւստաթիոսի վրայ
չփուած մոլորութիւններն, և աւելի
գահու խնդիր, ինչպէս Պաւլինոսինն
եղաւ, որ և հաստատուեցաւ Հռոմայ
կողմէն: Վասն զի, ըստ պատմելոյ
Սոկրատայ և Սողոմոնոսի, թղթա-
կցութիւն մը եզաւ 'ի Փոքր Հայոց և
Եւստաթիոսի կողմէն առ գահն Հռո-
մայ, յորում կը բազմէր այն ատեն լի-
բերիոս քահանայպետն, և թղթա-
կցութիւն յաջողեցաւ (367, և ըստ Պա-
րոնիոսի՝ 365), և հօնկէ գնաց Հռոմայ
երիցու մը հետ՝ որ կոչուէր Ելպիտիոս,
Լիւրիկէի ժողովոյն ներկայ զանուեցաւ
(367, 368). և թերևս իր աղաւթեան
թուղթն առած՝ դարձաւ նստաւ աթո-
ռը: Այս բանս տեղն 'ի տեղն չգիտնա-
լով Սուրբն Քարսեղ, կը գանգատի Ա-
րևմտեայց, ըսելով թէ՝ Եւստաթիոս
միակ իր յուսահատութեան ապաստա-
նարանն 'ի ձեզ գտաւ, և կը յաւելու՝ թէ
արգեօք լիբերիոս իրեն կ'չ բաներ առ-
ջև դրաւ, և թէ ինքն Եւստաթիոս ա-
նոնց որ մասին հաւանեցաւ՝ չենք գի-
տեր. բայց այսչափս միայն գիտենք, կ'ը-
սէ, որ թուղթ մը ունէր 'ի գահէն, և
զայն ցուցընելով Տիանացոց (Կապադ-
դովկեցոց) ժողովոյն՝ ժառանգեց նո-
րէն իր աթոռն: Սերաստիոյ երէց մ'ալ
կը յիշէ սուրբն Քարսեղ քան զԵւստա-
թիոս յանդուգն հակառակասէր՝ Պի-
մենիոս անուամբ, միանգամայն համա-
խոհ Եւստաթեայ: Կամ յառաջ քան
զդարձն Եւստաթիոսի 'ի գահն կամ
յետոյ, զոր օրոչակի չենք գիտեր, դա-
տապարտեցաւ սա 'ի Գանգրեայ ժողո-
վին, որուն կանոնք գրեթէ Եւստաթիո-
սի մոլորութեանց դէմ են, և են քսան և
երեք կանոնք, յորում և յանուանէ յիշա-
տակին Եւստաթեանք ալ: Այս ժողովն

էր որ նաև կանոնական թուղթ մ'ալ գրած էր առ Հայս՝ անշուշտ նկատմամբ այս նիւթոց և հայկազն Եւստատիոսի համար, որ չմոլորին անոր ետևէն. և մէկն եթէ բազդատէ այն ժողովոյն կա- նոններն՝ Եւստատիոսի վրայ ըսուած մոլորութեանց հետ, զոր կը յիշէ հա- ւասարապէս Ս. Բարսեղ, և Սոկրատ և Սողոմենոս, ամենևին ճիշդ կը գտնէ Ի- րարու հետ. որով ուրիշ բան չենք ըսեր բայց եթէ սա միայն՝ որ Գանգրեայ ժո- ղովն Եւստատիոսի և Հայոց համար գումարուած է: Վասն զի յետ առաջին անգամ թոռէն իյնալուն, Եւստատիոս շատ կողմեր շփոթութիւններ պատճա- ռեց, մինչև նաև ՚ի Պոնտոս, ՚ի Դազիմոն կոչուած տեղն, ուր հարկ եղաւ որ վագէ Սուրբն Բարսեղ՝ խռովութիւնն դադրե- ցնելու համար:

Միայն Եւստատիոսի համար այս- չափ երկնցընելնիս՝ նիւթերնէս դուրս չէր, այլ այս էր այն ժամանակի վիճակն զոր ունեցեր էին ՚ի Փոքր Հայս քանի մը գաւառք: Հօն Սուրբ Ներսիսի իշխա- նութիւնն չէր հասներ, այլ հպատա- կեալ էին սրբոյն Բարսղի, ինչպէս Սա- տաղ, Սեբաստիա և Գաղթականութիւն Հայոց (Κολωνία Ἀρμενίας)¹, ուր ճամբու գծուարութեան համար հաղիւ երբէք յայց կ'ելլէր սուրբն Բարսեղ, և ինչպէս ինքնին կը խոստովանի՝ և ոչ նամակ մը ուղղած էր անոնց, և որոնց եպիսկո- պոսն էր այս ժամանակս Եւփրոսիոս. և իրեն կը գրէ վերջապէս թուղթ մը քա- նի մը տող յամին 375, յորում միայն ինքզինքն կրնայ արդարայնել պատճառ բերելով ճամբաներու նեղութիւնն և տեղւոյն հեռաւորութիւնն: Սատաղիս ալ ունեցաւ իր գլխէն անցած դէպքեր. Կիւրեղ անուամբ եպիսկոպոս մը դրած էր հօն, զոր ինքն կը կոչէ եպիսկոպոս Հայաստանի (Κύριλλος Ἀρμενίας), որուն վրայ ժողովուրդն ամբաստանութիւն- ներ շինած էր և ընդդէմ եպիսկոպոսին յուղած, գնաց Սուրբն Բարսեղ և խա- ղաղացուց զանոնք և հաշտեցուց, գոնէ

առ ժամանակ մի: Այս եպիսկոպոսնե- րէն զատ, Հայաստանի վերաբերեալ շատ եպիսկոպոսք կը յիշուին ՚ի թուղթս՝ Բարսղի, բայց դժբաղդարար միայն անուամբ և ոչ տեղն նշանակուած է և ոչ վիճակն՝ թէ ուր հովուէին: Յամին 372, երբ առ իտալացիս և առ Գալլիա- ցիս թուղթ մը գրեց, հօն ըստ օրինի պէտք էին ստորագրել եպիսկոպո- սունք. արդ այն ստորագրութեան մէջ կը գտնենք արևելիւնն անուանք, որ մեղ ուղղակի զՀայաստան կը յիշեցընեն, ինչ- պիսի են Խոսրով, Յովսափէս, Նարեկ, և այս յետինս անշուշտ է մեր Սուրբն և Պարթևն Ներսէս, որ ՚ի Մեծ Հայս կ'իշ- խէր. Խոսրովայ ով ըլլալն չենք գիտեր. իսկ Յովսափէս (որ ըստ յոյն ձեռագրաց զանազան գրութիւն և հնչումն ունի, ինչպէս Խասակիոս, Խասկէս՝ զոր կըր- նանք համարիլ կամ Յուսիկ կամ Խա- հակ), կը յիշուի ՚ի Ս. Բարսղէ ՚ի հե- տևեալ տարին (373), երբ գրելով առ Եւ- սեբիոս Սամասացուց եպիսկոպոսն, կը դրկէ զայն թուղթն ընդ Յովսափէսի կամ Յուսիկան (հօս ալ յոյն ձեռագ- րիքն թուական են) և կ'ըսէ որ ինքը կը պատմէ իր բերնովը իմ կրած ցաւ- ւերս և հիւանդութիւններս. վասն զի թուի թէ նոյն տարին ծանր ճամբոր- դութեանց պատճառաւ դժուարին հի- ւանդութիւն քաշեց Սուրբն Բարսեղ:

Իրաւցընէ մեծ էր Ս. Բարսղի վիճակին ծանրութիւնն, ուր բարուց զանազանու- թիւնն և լեզուաց տարբերութիւններն և հերձուածներն կը ստիպէին զսուրբ հայրն որ կամայ և ակամայ գառն հո- վուուի մը ունենայ. ինչպէս արդեամբք ալ եղաւ: Կը վախէր շատ անգամ որ ՚ի կողմանէ Փոքրուն Հայոց և ՚ի Կիլիկիոյ չըլլայ թէ ճայթէ խռովութեան ձայն մը, մանաւանդ, կ'ըսէ ինքն իր մէկ նա- մակին մէջ, Հայաստանի Տեառապօլիս կոչուած մասէն Ինչ էր այս Տեառա- պօլիսն (Τετραπόλις Ἀρμενίας), բայց եթէ անշուշտ վերոյիշեալ չորս գաւառաց միաւորութիւնն՝ որ կը ձևացընէր Հա- յաստանի այն բաժինն՝ որ ենթարկեալ էր սուրբ Բարսղի, որք են՝ Սեբաստիա,

¹ Ե՛ւսիւն Գարահատարու կողմերն:

Սատաղիա, Նիկիոպոլիս և Կոյոնիա կամ Գաղղոսք Հայոց, ոչ միայն իրեն պարտքն էր դանձնը հովուել անուամբ, այլ անձամբ յայց ելլել, անոնց եպիսկոպոսներ կարգել, ինչպէս շատ անգամ կը յիշէ յիւր թուղթս, և բարեկարգութեան կանոններ սահմանել, ժողովոց փոյթ տանել, Բայց և միշտ կը ջանար որ անոնց լեզուացը գիտուն և հմուտ անձինք կարգէ յեպիսկոպոսութեան, ինչպէս Հայոց բաժնին՝ հայախօս և հայալեզու եպիսկոպոս, և կ'երևի թէ արդեամբք ալ զնոյն ըրած է. թոյլ կու տայ որ Հայք իրենց լեզուաւը զպաշտամունս կատարեն (Թղթ. 128), որով կ'երևայ թէ այն փոքր շփոթութիւնն որ ծագեցաւ 'ի Գաղուծս Հայոց՝ լեզուաց պատճառաւ էր, որուն համար կ'ըսէ՝ « վարեացին նոքա լեզուօք որովք և կամեացին », միայն թէ հպատակին իրենց վրայ դրուած կարգաց: Եր ցաւի դարձեալ Եւստատիոսի անկմանը վրայ, որով գրեթէ և Սերաստիա ու Սերաստացիք իրեն օրդիւթեմնէն հեռացան, և կորսնցուց, կ'ըսէ, այնպիսի տեղ մը ուսկից կը մատակարարէի ինձի պիտանի անձինք նոյն լեզուին հմուտք և աշոգակ (Թղթ. 99 զոր գրեց յամին 372). և Եւստատիոսի բաժինն կը կոչէ իրեն թեմ (παροικια), և գիտնան կ'ըսէ ազգին բարբառքը (ιδιωματα εθνοϋς): Նոյն թղթով կ'իմացընէ նաև մեզ որ և 'ի Սատաղս կարգեր և կանոններ գրաւ, և կը պախարակէ Հայոց անխտութիւնն և անտարբերութիւնն յիրս կրօնից:

Սակայն այնպիսի հմուտ և վարժ անձի մը շատ նեղութիւն էր Հայաստանի խորերն երթալ, և տեղ մը իր նամակաց մէջ, զոր գրած է առ Եւսեբիոս եպիսկոպոս Սամաստացոց, առ իւր մշտնջենաւոր բարեկամն (372), կ'իմանանք, որ մինչդեռ յայցելութեան էր 'ի Հայս՝ թուղթ հասաւ իրեն յԵւսեբիոսէ, և այնչափ եղաւ իր ուրախութիւնն այն թղթին համար, որպէս կ'ըսէ ալէկոծեալ ծովու մէջ նուարկող մը հեռու անց տեսնէ փայլուն և պայծառ ջահ մը ցոլացեալ. ասով կ'ուզէ բացատրել այն

տեղեաց տխրութիւնն, թէպէտ իր ծնած կլիմայն ալ ոչ ինչ նուազ դաժան էր: Արդեօք 'ի կարգս Հայ եպիսկոպոսաց պէտք է յիշատակենք նաև Ստրէյոս (Օտրոօς) Մեկիտինոյ եպիսկոպոսն, առ որ կը գրէ Ս. Բարսեղ (յամի 374), և կը յորդորէ զինքն որ իրեն հետ ստէպ թղթակցութիւն ընէ. այն ատեն Եւսեբիոս հեռացած էր: Իսկ յամին 376 կը գրէ ուրիշ թուղթ մը Սուրբ Բարսեղ առ Եւսեբիոս Սամաստացոց և եպիսկոպոս, յորում կ'ողբայ որ փրոնտոն (Φρόντων) անուամբ մէկն, որ փառասիրութեան համար մատնելով ինքզինքն ու իր հաւատքն՝ եպիսկոպոսութիւն ձեռք բերաւ, բայց անով սիրելի ըլլալու տեղ, աւելի ատելի եղև բոլոր Հայաստանի (κοινόν βδελύγμα πάσης τῆς Ἀρμενίας): Ասոնք են զորս կ'ընթեռնուէք Ս. Բարսեղի թղթոց մէջ հայկական վիճակի մը և բաժնի հայ եպիսկոպոսաց աստ անդ ցրուած. և որովհետև նամակաց շատին թուականն տարակուսական կրնայ համարուիլ հմտից, անոր համար դժուարին է ասոնց մէջ ժամանակագրական կարգ մը բռնել:

Սրբա՛ի փոքր Հայոց բայց տեսանք որ Արևելեայց առ Արևմտեայս գրած թղթին մէջ օտորագրեալ էր նաև Ս. Ներսիսի անունն (յամի 372), Νάρσης հընչմամբ. բայց ուրիշ հետաքրքրական անուն մը կը կարդանք 'ի պատմութեան Սոկրատայ Աթրլաստիկոսի, որ յետ գումարման ժողովոյն Ատտիոքայ, հարք ժողովոյն կը գրեն թուղթ առ Յոսիանոս կայսր յայրորդ Յուլիանոսի (363-364), և այս թղթոյս մէջ 'ի կարգի եպիսկոպոսաց կը յիշատակին՝ Ուրանիոս եպիսկոպոս Մեկիտինոյ, և Իսակոկիս՝ Մեծիք Հայոց (Ισαάκιος τῆς Μεγάλης Ἀρμενίας). այս օտորագրեալն անունն մերձեցընելով հայրուսն կը թարգմանէ Եպիփան Աթրլաստիկոս՝ Isaacius, և այլք կը համարին նոյն մեր վերոյիշեալ Ιωσαάκιος կամ Ισαάκιος անունն հետ. Իսկ գրոցս փռանկ ծանօթաբանողն՝ կը կարծուի, կ'ըսէ, որ այս Իսակէս կամ Իսահակն կ'իյնայ ընդ մէջ Խոսրովայ և Ներսիսի (եպիսկոպոս)

կողմաց 'ի Մեծ Հայս). ինչ որ ալ կարծուի, մեղի անծանօթ է այս անձնս. Ս. Սահակայ հետ չենք կրնար նոյնտօցնել, և ոչ Չունակի հետ գոր Բուզանդ կը յիշէ փոխանակ Ներսիսի: Արդ. և յայսմ մասին քանի մը անուանք ալ կը գտնուին եպիսկոպոսաց' որ 'ի Մեծ Հայս նստէին, Մերութանն շատ ասալքան զՆերսէս, բայց Ներսիսի մտիկ ատեններն՝ խորով, իսահակ կամ Յուսիկ, իսակոկիտ:

Գ. Ս. Ներսիսի իշխանութիւնն 'ի Մեծ Հայս. — Ուսեալն և վարժեալն 'ի Կեսարիա, և շատ յոյն վարդապետաց քով դեղերովն Ներսէս, հարկաւ իր ողին ալ աւելի մշակեալ պիտի ըլլար, աւելի յառաջացեալ և ծաղկեալ ուսմամբ. որով և նմանօրինակ գործերն՝ գոր նկարագրէ մեզի Բուզանդ՝ չի գարմացընեն զմեզ իբրև անհաւատալեաց պատմիչ. վասն զի մի և նոյն գործերն արդէն տեսած էր ինքն Ներսէս 'ի Յոյնս, և բարենախանձ փութով լանաց անոնց նմանել: Իրանբարոյ, արդարասէր, քաղցր, միանգամայն և սաստիչ էր Ներսէս 'ի բարուց. ընդդէմ՝ ախտից և շարութեան կշտամբիչ դառն, օրինաց արդար վրէժխնդիր, և առաւել օրինադրական և կառավարող միտք և հանճար ունեցող: Իրեն վարուց ներբողիչքն չեն խնայած և ոչ մի գովասանք որ շտան այսպիսի վերնաշնորհ անձի մը. առաքինութեան եօթնարփեան շնորհք կատարեալ կերպով հեղեալ զեղեալ էր 'ի նմա. և ով արդեօք աւելի յիշքն գրասած է բովանդակ հայ ազգութեան սիրտը, բայց եթէ ինքն Ներսէս. յետ օրոյն Գրիգորի միակ լուսաւորիչ կրքնակք սեպել զսա, ոչ այնչափ 'ի գիտնական մասին, որչափ աւելի 'ի բարեկարգութեան, Հայաստան, որ ըստ Մովսէսի խորենացոյն, բարբարոսական և մանաւանդ հեթանոսական երևոյթ մը ունէր, իրեն ժամանակ հասար գրեթէ բարեկարգութեան ծայրագոյն աստիճանն. ինքն, ըստ նմանութեան յունական վանորէից որովք

պայծառացած էին Կապադոկիկա և Փոքր Հայաստան, լեցուց նաև զՄեծն Հայաստան անմասն գեղեցկութեամբք Բուզանդ երկայնապատու՝ կը վիպէ անոր ըրած բովանդակ գործերը, Նախ անմիջապէս յետ գալոյն՝ յԱշտիշատ ժողով գումարեց և հօն հաստատեց քանազան կանոնադրութիւնս, զորս կը կոչէ Բուզանդ. « Առաքելակարգ կանոնս » և « Հայրենի կարգս ». վերցուց ամեն հեթանոսական կոծք և փետումն 'ի վերայ մեռելոց անյուսաբար. թէ յա մուսուլթեան օրինաւորք ըլլան և թէ ամուսինք շտան իրենց խոստմանն և հաւատարմութեանն. անկարգ խառնակութիւն չընել՝ մանաւանդ մերձաւոր նուերտանքն առնելով, որ ապօրինաւոր բան մ'էր. հրաժարել, ինչպէս և Առաքեալն սահմանէ, 'ի մեռելոտոյ և յարենէ. և այլ առաքելական և զևտական կանոնք՝ զորս ժողովեց և կարգեց Սուրբ Ներսէս, խոսիւ կը հրաժարեցընէր 'ի կանոնն, որ և իցէ յախտից մէկդի կենալ, մանաւանդ յայնոցիկ՝ որ հակառակ էին բնական օրինաց:

Բաց 'ի յեկեղեցական կարգաց և բարեգարգութեանց, կը հասնէր Ներսիսի բազուկն նաև 'ի թագաւորական զահն՝ բայց ոչ յանդուգն կերպով, այլ աստուածային վրէժխնդիր ոգով. վասն զի գեղեցիկ կերպով լծած էր քաղցրութիւն ընդ սաստկութեան, որուն համար կ'ըսէ ներբողոյն. « Քաղցրութեամբ վարդապետութե՛ գաւազանին՝ ուղղիչն, և ցամախական ցպով սաստկութեան՝ յանդիմանիչն ». չէր շոգումը, չէր վաղաքընէր արքունեաց, և ակնառութիւն չունէր նաև առ նոյն ինքն թագաւորն. բայց ասով աւելի սիրելի և պաշտելի էր բոլոր ազգին և թագաւորին ինքնին: Կը ստիպէր ըլլա թագաւորս՝ որ արօք և անիրաւ պահանջմամբք չի ծանրաբեռնեն զազգն, նոյնպէս և զիշխանս. իսկ հպատակաց և ծառայից հրաման կու տար՝ որ հնազանդին միամտաբար իրենց տերանցն՝ Գեղեցիկ առաքինութիւններէն մէկն ալ էր 'ի Ներսէս՝ աղբատարութիւն:

և օտարասիրութիւն, որուն դովասանքն միաբերան կը վկայեն պատմաբանք. որուն մէկն միայն բաւական է, զոր կ'ըսէ Մերոպ երէց. «Յաւուրս մեծին Ներսիսի մուրացիկ ոչ ոք տեսանէր, զի հիւանդանոցս կարգէր և հիւրանոց 'ի պէտս ազքատաց» . այլ և բաղումք յաղքատաց իրեն հետ սեղանակից կ'ըլլային . ինքն շինեց և եպիսկոպոսանոցս և եղբայրանոցս մեծամեծս և փորձուն երկուհապար և քառասուն, և հրամանէր 'ի զերծ տեղիս և յանցս ճանապարհաց, և 'ի զլուխս լերանց պանզովս շինել, և հիւրանոցս 'ի քաղաքս և յազարակս, և կարգեաց 'ի վանորայս Կիրիմս թագաւորաց և իշխանաց և զօրավարաց, զի ընտանեբար հոգացնին վասն նոցա, և բաշխեաց յեղբայրանոցս զխոզս և դաստակերտս 'ի միխթարութիւն նոցա» : Գարձեալ յաւալ քան զՆերսէս շատ փնասներ կ'ըլլային 'ի Հայս 'ի պատճառս անհոգութեան և դիւրութիւն չունենալնուն . շատք գազանակեր, գետալէժ և ձիւնախեղդք կ'ըլլային . որոնք ամենուն դարմանն մտածեց ինքն Ներսէս, և կարգեց թագաւորական քաղաքաց նման իլեաններ և օթեւաններ և պանդոկներ . Զգերիս ինքն փրկանաւորեց դրամով և շատերն քարոզութեան ազգեցութիւն բերաւ 'ի հաւատոս : Բայց և ուսման ոչ ինչ նուազ փոյթ ունեցաւ, կարգելով ասորերէն և յունարէն դպրոցներ ընդ բոլոր Հայաստան : Միով բանիւ, կըրնանք ըսել մեր պատմչաց հետ որ այսպիսի ժամանակ մը չէր ունեցած Հայաստան և ոչ ալ թերեւս պիտի ունենար, եկեղեցական և աշխարհական փառքով : Սակայն ժամանակին անգիր յիշատակութիւնքն՝ բերանոյ 'ի բերան անցնելով շատ խանգարմունք կրեցին, և կըրնանք ըսել համարակ' որ չգտնուեցաւ մէկն որ ճիշդ պատմութիւնն քաղելով մեզի հասցընէ այսպիսի կարեւորագոյն անձի մը, և հայկական պատմութեան մեծ դատարկ մը լեցընել : Գրուեցան Ներսիսի վարքն և պատմութիւնքն, բայց լի հրաշիւք և երկրորդա-

կան անվաւեր (apocryphe) և վիպապատում (légende) զրուցիւք, զորս զըստուարին է մեզ արդ յղկել կամ գոնէ սրբել 'ի բոլորովին անհաւատալեաց : Եւ նկատմամբ բովանդակ իսկ վարուցն Ներսիսի թէ 'ի շինուածական բարեկարգութիւնս և թէ 'ի սրբութեան վերաբերեալ դէպս՝ շատ տեղ կը տեսնենք որ նոյն ատենուան ուրիշ սրբոց վարուց նմանութեամբ պատմուած են . այդ վանորէից բազմութիւնն, այն հըրաշքներն, առ վաղէս երթալն և անոր որդւոյն՝ ըստ մեր ձեռագրաց Տրալիանոսի՝ հիւանդանալն և մեռնիլն, կը պատմուին նաև սուրբ Բարսղի վրայ . և համառօտ ըսելով՝ ժամանակակից ըլլալով իրարու՝ շատ տեղ անձն ալ չիտ թուած է, Ներսէս և Բարսեղ իրարու հետ : Բուզանդ պատմիչն տեղ տեղ հենգնական ոճ մը կը բռնէ Հայոց համար . և կ'երևի որ ինքն ալ չէ համոզուած ըսածին . կը գովէ զՀայս մակդիրներով, բայց միշտ պախարակելի գործեր կ'աւանդէ . 'ի նկարագրակ' երբեմն համառօտ, երբեմն շինծու, երբեմն ճշմարտապատում կ'երևայ . որով մեզի պատմական որիշ և անկեղծ գրչի երևոյթ չի տար : Բայց մեր միակ աղբիւրն է նաև յայսմ, այսինքն 'ի վարս Ներսիսի՝ Բուզանդն, և կըրնանք երկրորդ աղբիւրալ զՄերոպ պանուանել զերէցն : Ինքն Ներսէս էր, եթէ համարինք ստոյգ, թագաւոր և քահանայապետ . Արշակայ անուան ալ կը լուի՝ բայց միշտ ընդ անուամբ և ընդ ազգեցութեամբ Ներսիսի : Ըստ պատմչաց մերոց, սուրբն Ներսէս կարգեց 'ի Հայս 500 իշխանս բարձի, այս ինքն ցեղական իշխանութիւնս, 400 եպիսկոպոստուն և 2000 վանք . երանք թէ կատմիչքս աւանդէին մեզ այս եպիսկոպոսաց և վանորէից ալ անուանք, ինչպէս գրած են իշխանութեանց թիւն և անուանքն . յիրաւի հետաքննելի առաջինքն էին մեզի . վասն զի իշխանաց և իշխանութեանց անուանք կորեան ժամանակաւ, բայց ոչ նոյնպէս կ'ըլլար նաև եպիսկոպոսաց և վանորէից՝ որ

պատմական տեղ մը կը բռնէին՝ ի Հայս |
 Սուրբ Ներսէս ընդ բազում գործոց՝
 պարտական էր և յայցելութիւն իւրոց
 եկեղեցեաց, որ իրեն կը հնազանդէին,
 տնտեսել հոգալ անոնց պիտոյքն ։ Յայս
 այցելութիւնս երևելի է Բուզանդայ յե-
 շած Հայր Մարդպետին ընդ Ներսիսի
 ունեցած կռիւն, զոր կը յիշէ Մեսրոպ
 երէց՝ Թագաւորահայր Մարդպետ կո-
 չելով ։ Տեսնելք փոքր մի ո՛վ է այս
 մարդպետն և ինչ էր կուռոյն պատ-
 ճառն ։ Սուրբն Ներսէս, իր բարեկար-
 գութեան սիրող եռանդեամբն ամեն
 բան յօրինած էր, չէր ուզեր որ եկեղե-
 ցի կամ վանք աշխարհականաց կարօ-
 տանան, այլ տուաւ անոնց առատ եր-
 կիր և կարուած՝ որոնց պտուղը քաղե-
 լով վայելին ։ և ասով, ըստ բազմու-
 թեան վանաց և եկեղեցեաց՝ շատ ալ
 երկիր բռնուած էր ՚ի պէտս եկեղեցա-
 կան իրաց և անձանց ։ Այս բանս ազէկ
 աչքով չէր կրնար տեսնել Հայր Մարդ-
 պետն, այլ նախանձելով ընդ Ներսէս՝
 սպառնացաւ որ բոլոր երկիրներն գրա-
 ւել պիտի տայ թագաւորին ձեռքով ։
 Միթէ Հայրն կամ Հայր Մարդպետն
 աւելի զօրաւոր էր քան զՆերսէս յայս
 Արշակայ ։ Արևելեան պատմութիւնն
 իրեն գեիս ու անառակ ժամանակաց
 զեղծումներն շարունակելով, արմատա-
 ցեալ օրէնք մը ունէր առաւել յարբու-
 նիս, ուր ներքինեաց բազմութիւն մը
 գրեթէ հաւասարագօր ուժ կը ցուցնէր
 թագաւորին, և անոնց ձեռքով ժողովք-
 ներ կը գումարէր և կը հալածէր զուղ-
 զափառս ։ այդ այս սովորութիւնս թուի
 թէ և ՚ի Հայաստան ալ կար, յարբու-
 նիս Արշակայ ։ վասն զի մեր մէջ մարդ-
 պետ կը նշանակէ ներքինապետ, և
 մարդ կոչումն տրուած է ներքինեաց ։
 այսպէս կը գտնենք գործածուած և ՚ի
 հինան մեր, ինչպէս ՚ի Գիրս Եսթերայ
 (գլ. Բ. 20) պահպանապետք մարդ-
 կանն, որ սեպհական պաշտօն մ՛էր ։
 Բայց յԱսորիս և ՚ի նորին դրացիս նոյն
 զեղծումն մտաւ և յեկեղեցիս, որուն
 համար կը գանդատի և Ղազար փար-
 պեցիին որ Շմուէլն և Բրքիշոյ, որ յԱս-

րեստանէ եկան, և հէին լոյժ կրօնիք,
 եկեալք ըստ սովորութեան իւրեանց
 աշխարհին տանտիկնօք, և ոչ կէին
 ըստ սուրբ ամբիժ կրօնիցն ։ — Գա-
 տնը՝ չենք գիտեր թէ արդեօք անոնց
 կարգէն էին, բայց աւելի ստուգագոյն
 Բուզանդ կ'աւանդէ քանի մը եպիսկո-
 սաց համար որ էին ՚ի բաժնի խորովու-
 Պարսից թագաւորին, որ էին Չաւէն,
 Շահակ կործեայ, Ասպուրակ, Փաւստոս
 և Չորթ՝ այր ներքինի կը կոչէ, և կ'ըսէ
 թէ այս երկու յետինք էին Ներսիսի
 ժամանակն, և Չորթ անոնց հետ ։ վասն
 զի, կ'ըսէ, և էին ՚ի ներքնի ? Հայրապե-
 տին ՚ի տան իւրում ընդ նորա ձեռամբ
 երկուտասան եպիսկոպոսք, աթոռա-
 կիցք իւր, գործակիցք և խորհրդա-
 կիցք ։ Եւ որ հետաքրքրական ևս է,
 մեր Բուզանդն՝ որ զատնը կը յիշէ, ոչ
 իբրև գովելի եպիսկոպոսք, այլ զգետտի
 շապլուժիւն ունէին, և գեղեցիկ ու
 զարդարուն զգեստներ կը հագնէին, և
 այս այս է Բուզանդայ ըսածն անոնց
 զխաւորին համար, որ էր Չաւէն ։
 և կրօնս մի եղ, զի ամենայն քահանա-
 յից ուսոյց առնել հանդերձ զինուո-
 րաց ։ Չի թողին զկրօն առաքելական
 եկեղեցեացն, սկսան դնալ ըստ իւ-
 րեանց մտաց ։ զի ոչ ըստ կրօնիցն ա-
 գանէին քահանայքն զպճղնաւոր, որ
 էր ՚ի բնէ, այլ սկսան զխոտորկուորսն
 ՚ի վերայ ծնագոյն ունել ։ Եւ զարդարէին
 զհանդերձս իւրեանց պէսպէս նարօ-
 սօք, և սիգային որպէս ոչ վայել էր ։
 և զմորթ մեռելոտիս զազանացն քա-
 հանայքն անխտիր ագանէին ։ Նոյն
 բանն կը կրկնէ Չաւենին յաջորդաց
 համար ալ, թէ և վասն կրօնիցն հան-
 դերձոյն զեղեալ կարգն ըստ կրօնիցն
 Չաւիսայ գնային ։ Այս եկեղեցական
 զգեստուց փոփոխութիւնն կը լինչեցնէ
 մեզի վերոյիշեալ Եւստաթիոսի հեր-
 ձուածոյն մասն, վասն զի ինքն ալ նոյնը
 օրինադրեց ։ Դառնալով փոքր մի յա-
 ոաջ ՚ի թուղթս Բարսղի, կ'ուզենք միայն
 անդադարձընել ընթերցողաց բան մը
 որ բոլորովին նոր թուի ՚ի գիրս Ս-
 Բարսղի, և ըստ արտաքին նշանակու-

Թեան կը նոյնանայ մեր վերոյիշեալ
 Հայր կամ Հայր Մարդպետս կոչուածին
 հետ: փաւստոս եպիսկոպոսն զոր կը յիշէ
 Սուրբն Բարսեղ, որ եպիսկոպոսութեան
 փափաքով վառուած կ'ուզէր դահ մը
 յափշտակել, ուստի՝ թուղթ մը ձեռքը
 կը դիմէ առ Բարսեղ. սա ոչ թուղ-
 թը և ոչ թուղթ ներկայացնողն յար-
 զելով՝ կը մերժէ իւր քովէն առանց ե-
 պիսկոպոս ձեռնադրելու. իսկ փաւ-
 ստոս նոյն թղթովն կը ներկայանայ
 Անթիմոսի, որ միամտաբար կը ձեռ-
 նադրէ, որով պատճառ կու տայ զթ-
 տութեան ընդ ինքն և ընդ սուրբ Բար-
 սեղ: իսկ այն անձն ուսկից թուղթ ու-
 նէր փաւստոս, Սուրբ Բարսեղի թուղթն
 կը կոչէ զնա պապա (πάππa), որ նոյնա-
 նիշ է մեր Հայր բառին. բայց գրութե-
 կերպէն կ'ուզէ հասկըցնել Բարսեղ՝ որ
 Անթիմոս այդ սխալմունքն պիտի չընէր
 գիտնալով ու ճանչնալով այդ խուճ-
 եկեղեցականքն: Արդ եթէ կարենայ
 մեր Բուզանդայ այդ ներքինապետաց և
 ներքինեաց պատմութիւնն՝ լոյս մը տալ
 քննչաց Սուրբ Բարսեղի երկու իրեք
 թղթոցն՝ մեծ պատմական արգիւնք է:
 Երանօթ է ևս որ Հայ ազգին մէջ կար-
 ցեղ մ'ալ Մարդպետոքիս անուամբ,
 որուն նշանակութիւնն անշուշտ վերին
 ստուգաբանութենէն առնուած է, և
 անկէ կոչուած՝ Հայրն Մարդպետու-
 քեան, Հայր մեծ իշխանն Մարդպե-
 տոքեան՝ որ յիշուի այն սատրապաց
 հետ որ տարան զՆերսէս 'ի կեսարիա.
 և նկարագրելով Բուզանդ զսա՝ կ'ըսէ.
 « Էր Մարդպետն Հայր՝ այր չար և
 ժակնտարոյիքը ակօրէն և ակիրաք
 քան զաւաչիկն Հայր ակնուն Մարդ-
 պետսն » . իսկ այս Հայրին իշխանու-
 թեան տակ եղած տեղերն ալ կոչուէին
 Մարդպետութիւն. — « Երանէր սա չըր-
 ջէր ընդ մարդպետութիւնն իւր » . և
 այս ներքինին՝ Հայրն՝ զեկեղեցականս
 կը կոչէր կանանցահանդերձ մարդիկ՝
 զիրենք ծաղրելու համար: Այսպիսի
 շատ է Հայր Մարդպետին նշանակու-
 թեան համար, որ առաջին անգամ
 կը յիշուի 'ի պատմութեանս. որոնց

դէմ զայրացեալ Սուրբն Աթանաս՝
 խստիւ կը յանդիմանէր զեկեղեցա-
 կանս, որ չըլլայ թէ զնեքրինիս ընդու-
 նին 'ի կարգս եկեղեցւոյ: Բայց ներքե-
 նի Հայրին, ինչպէս կոչէ Բուզանդ, հա-
 կառակութիւնն գէշ վերջ ունեցաւ, և
 դատաւ ինքն Ս. Երեսիսի անհիծից ար-
 դիւնքն յափուսու եփրատայ, Սանատրը-
 կայէն Մծուրք քաղաքին քովերն, ուր
 Շաւասայ արծրունին զանհիւսց սպան-
 նեց նետահար: Հայր Մարդպետին
 պատմութիւնը կը կարգէ Բուզանդ զկը-
 նի դարձի Սրբոյն՝ յաքսոբանաց:

Ե. Ներսիսի երբ առ վաղէս և աք-
 սար. և ամուսնուորիս Արշակ քազա-
 շորին. — Ըստ մեր պատմչաց համա-
 ձայն վկայութեանն՝ թագաւորն Արշակ
 իրեն կին առաւ յոյն ազգաւ թագաւո-
 րական ցեղէ օրիորդ մը, զոր Բուզանդ
 կը կոչէ Ողմուպի, և Մեսրոպ երէց Դոմիթի՝
 կրճատմամբ բառին. բայց այս օրիոր-
 դին ով ըլլալն կը նշանակեն մեծ վեր
 'ի վերոյ: Թատրեղական գէպք մը կը
 պատմէ ինքն Բուզանդ, այն գեղեցիկ
 դրուագն Փառանձեմայ և Գնելոյ, զոր
 կարելի էր նաև արժանապէս ներկայա-
 ցնել 'ի տեսարանս՝ արժանի ունկըն-
 դրութեան, և հին յոյն թատերախա-
 դուց նիւթ մը՝ որ իր ամեն պարագա-
 ներովն հայկական վիպասանութեան
 առանձին պերճութիւն մը կը կազմէ:

Վաղէս կայսրն արիանոսութեան
 ջերմ մոլորութեամբն վառեալ՝ զրեթէ
 քննիչ մը կարգեալ էր բոլոր վարդա-
 պետաց և հայրապետաց, և զորս չէր
 գտներ իր մտացը նման մոլորեալ կ'աք-
 սորէր 'ի հետաւոր տեղիս: Ընդ Հայս և
 ընդ Յոյնս եղած դաշանց նորոգու-
 թեան համար Արշակ թագաւորն զըր-
 կած էր զՆերսէս շատ մը նախարարնե-
 րով 'ի դուռն կայսեր. հօն դժբաղդա-
 բար կայսեր միամօր որդին Տրայիանոս
 կամ Տիտիանոս, ինչպէս կ'աւանդեն
 մերքն, մերձ 'ի մահ կը հիւանդանայ.
 ստոյգ պատմութիւնը կ'ըսէ թէ կայսրն
 մեծաւ փութով զսուրբն Բարսեղ կան-
 չած ըլլայ 'ի բժշկութիւն որդւոյն, սա-

կայն Բուզանդ այս սրտնելիքն կը պատմէ մեր Ներսիսի վրայ: կը կանչուի Ներսէս 'ի դուռն. բայց հօն ոչ եթէ դաշանց խնդիրք կ'ըլլան, այլ աստուածաբանական բարձր ճառախօսութիւն մը, զոր Ներսէս կը խօսի արիստեան կայսեր առջև: Եթէ իրաւցընէ Ներսէս խօսած է այդ բանն առաջի կայսեր, անշուշտ կրնայիք արժանաւորաբար մը ալ անոր 'ի գիրս և յերկասիրութիւնս մեր սուրբ Հօրն. բայց հաւանական է որ այդ ալ Բուզանդայ գրչին ճռուածութիւնն եղած ըլլայ և ոչ բնիկ Ներսիսի բանք. յայտնի վկայութիւնք են բոլոր բանքն ընդդէմ Արիստականաց, ուր զՈրդոյ Աստուծոյ խօսելով կ'ըսէ. « Որդի ինքն յինքնութենէ և իսկ յիսկութենէ, յորովայնէ Հօր ծնունդ և ոչ արարած » . դարձեալ կ'ըսէ. « Որդի ըստ բնութեան գոյացութեան հօր » . դարձեալ « Հայր 'ի բնութենէ իւրմէ ջառական իւրոյ բնութեան հայրութեան ծնաւ (գորդի) ծնունդ կատարեալ միածին նման զուգակից » . ուրիշ տեղ կ'ըսէ յազգս Որդոյն. « 'ի բնութենէ ունէր Որդին զբնութիւն Հօրն կերպարանաց », և՛ « Որդի իսկակից Հօր և բնակից ծնողին » . ոչք ամենքն ալ գրեթէ նիկիական ժողովին *ομοούσιον* բառին պարզաբանութիւնք են, զոր մերս Բուզանդ գեղեցիկ կերպով, բայց քիչ մը երկայն կը զնէ Ներսիսի բերանն: Թէպէտ Բուզանդ կ'ըսէ թէ Ներսիսի խօսածներն գրի կ'առնուին « Սեմիարն նօտարացի արքային », սակայն անով հանդերձ՝ իւր երկայն խօսակցութիւնքն չեն կարող սեմիարաց կամ նօտարաց գրութիւնք ըլլալ, այլ թերևս լոկ ընդարձակած է զայդ և ճօխաբանած Բուզանդայ պերճ և յղկեալ գրչին: Ներսիսի վարդապետութիւնքն օգուտ մը չըրին կայսեր, այլ որդւոյն մահը աւելի մոխրագնաց զնա ընդդէմ Ներսիսի, և հրաման հանեց որ սքսորուի առ նապատ անբոյս և ամայի կղզի մը « 'ի ծովուն մեծի », զոր ուրիշ մը կ'ըսէ՝ յայնկոյս ուղիանոսի. եթէ անասուն եպիսկոպոս « այլոց քաղաքաց » սքսորել կու

տայ Բուզանդ ընդ Ներսիսի, որոնց հետ և այլ կղերիկոսք ուրիշ եկեղեցեաց, Ռաստոմ սարկաւազ մը և Տիրանամ: Բայց վաղէս վախճարով միանգամայն որ չըլլայ թէ Ներսիսի արքորանաց պատճառաւ՝ Հայք իրեն դէմ զինին և ապստամբութիւն մտածեն, խոհեմութիւն սեպեց, ըստ Բուզանդայ, սրբոյն Ներսիսի հետ գնացած սատրապներն ետ դարձունել, անոնց հետ գնելով միանգամայն զՏիրիթ և զԳնէլ՝ Արշակայ եղբորորդիքն, որ պատանդ գնացած էին առ կայսրն: Բայց Արշակ յետ ընդունելոյ զպատանդան, հրաման տուաւ իր կտրիճ և խորհրդական զՐավարին վասակայ՝ որ յարձըլի 'ի սամանս Յունաց. նա ալ կատարեց զհրամանն աւերելով մինչև 'ի կողմանս Գամրաց ինչուան Անկիրիա:

Մինչ Ներսէս հեռացեր էր 'ի Հայաստանէ այս վերոյիշեալ գետապանութե համար, իրեն տեղապահ կարգեր էր զիտադ եպիսկոպոս, որ զարմանալի էր վարուք և առաքինութեամբ զարգարեալ և նոյն իսկ ինքն Ներսէս տեսնալով ասոր ազնիւ ու առաքինի գնացքն զրած էր զնա տեսուչ ալքատաց: Խաղկարնեցի էր 'ի Մարազ գեղջէ, կ'ըսէ Բուզանդ, զոր 'ի խորենացին կ'ընթեռնունք փոքր մի տարբեր, որ կ'ըսէ թէ էր Խաղ « 'ի մարգաց կարնոյ », ուր Բուզանդինն է « 'ի կարին դաւառէ, 'ի գեղջէ Մարագայ ». բայց այս աւելի ձեռագրաց պակասութիւն թուի և ոչ պատմաց սխալմունք: Ամուսնաւոր կեանք ընտրած էր Խաղ, և երկու գուտար ունեցաւ, յորոց զմին տուաւ Ասրուկ անուամբ մէկու մը:

Մինչ բարեկարգապէս կը հովուէր Խաղ զհօսն Ներսիսի, որ իրեն յանձնուած էր, և կը յանդիմանէր աներկիւղ զԱրշակ իւր չար գործոցն համար՝ եթէ տեսնէր, կայսրն վաղէս կը մեռնէր, որով և սքսորեալքն՝ յորոց մի էր և մերս Ներսէս՝ կը դառնային յիրեանց տեղիս: Կը տեսնէր Ներսէս բոլորովին նոր զԱրշակաւանն բարձրացած 'ի կողմ գաւառի, ուր անօրէնութեան տեղի

մ'էր և անզգամութեան. բայց սուրբ հայրապետին կեանքն աւելի դառն պիտի ըլլար յետ դարձին յաքորանաց, քան ինչ որ յաքորանս անդ: Արշակ իրեն ախորժածն և սիրածն պիտի գործէր իբրև թագաւոր, և Ներսէս իրեն աստուածային յանդիմանութիւնքն ՚ի զուր պիտի արձկէր անոր դէմ: Նոր վիշտ և ցաւ պատճառեց Սրբոյն Ներսիսի փառանձեմայ դէպքն: Փառանձեմ Անդովկ Սիւնեաց իշխանին կինն ամուսնացած էր ընդ եղբորորդոյն Արշակայ ընդ Գնէլ: Բայց կնոջ գեղն հակառակութիւն ձգեց երկու եղբորորդեաց մէջ, Գնելոյ և Տիրիթայ: Տիրիթ չկարենալով իր կամքին չարութեան հասնիլ, միակ միջոց սեպեց ամբաստանել զԳնէլ Արշակայ, իբրև իրեն թագաւորութեան հետամուտ: Արշակ չյիշելով արեան մերձաւորութիւնը չյիշելով ազգայնութեան սէրը, ուրախացաւ որ մեծ գազանիք մը լսեց, և փութաց իր կասկածեալ թշնամին մէջտեղէն վերցընել: Իր գորավարին վարդան եղբայրն զրկեց որ կերպով մը առանց ծածուկը իմացընելու զԳնէլ ջանայ արքունի բանակն բերել, ՚ի Շահապիվան: Լուեց առժամանակ մը Տիրիթ սպասելով որ իր փափագածին պիտի հասնի, Նաւասարդի գեղեցիկ հանդէսն կը կատարուէր ՚ի Հայս, ուր բոլոր Հայաստան կը ծխար կ'ուրախանար, մարը, որդիք և հարը ու փեսայք և հարսունք, այդ մեր սև սրտով վարդանն բոլոր խաբէութիւններն ՚ի ծոցի ամբարած իբրև ուրախութեան աւետիս կը տանէր վազելով առ Գնէլ, Հարսն ու փեսայն միատեղ էին, չարաւետաբերն հասաւ, շրթունքները խածնելով, կէս ժմիտ կէս դառնութիւն բերանը բացաւ ու ըսաւ. ինչ կը դանդաղիք, թագաւորն, ազգն և Հայաստան առանց ձեզի հանդէս չկրնար կատարել, փութացէք առ Արշակ՝ որ զՆաւասարդ տօնենք: Իրաւ կարծեցին միամիտ և անկեղծ փեսայն ու հարսն, և ելան զարդարուած ճամբայ, բայց գիշերը վրայ հասնելով տեղ մը հանգչեցան մինչև ցառաւօտ: Որովհետև նա

ւասարդական հանդիսին ներկայ պիտի ըլլային ամենքն, Սուրբն Ներսէս ալ իր տեղը խրկեց իրեն ամոռակիցը Խաղ, և Արքիտիակոնն Մուրիկ՝ որ իրեն տեղ ներկայանան հօն: Երգեցաւ Նաւասարդի առաւօտն և իմաց տրուեցաւ թագաւորին՝ որ Գնէլ հասեր դուռն է: Այն ատեն ք թաւ մարմնով և թուխ գունով ք Արշակն նշան տուաւ որ տանին սպաննեն զԳնէլ: Երբ արքունի դռնէն ներս կը մտնէր Գնէլ ձիաւոր հասան սուսերաւորք վրան, վար ձեցցին ՚ի ձիոյն, ձեռքերն յետս կապեցին և տարան ՚ի Սիւս՝ որ հօն սպաննեն: Այն աղետալի տեսարանին ինքզինքը կորսընցուց փառանձեմ, զգեստները պատառած վազեց առ Սուրբն Ներսէս, ք վաղ հասիր, կը պողար, գեռ զամուսինն իմ. խողխողեն ք: Այն գուժին սուրբ հայրապետն թողլով իր նուիրական ազօթքն ժամերգութեան, կը վազէ առ Արշակ, բայց ինչ տեսնայ, թագաւորն կնճացեալ լոռի նման, ինչպէս կ'ըսէ պատմիչն, իրեն սամոյրին մէջ փաթածութեամբ, գլուխն ներս քաշած՝ կը խորդայր և կը մննչէր: Ի զուր բացաւ հայրապետն իր սուրբ բերանն, ուսկից անէծք և եթ բղկեցցին այն վայրկենին՝ բոլոր արքունի տան և ազգին վրայ, այն սոսկալի նղովքն՝ որոնց արդիւնքն դեռ կը կրէ հայ ազգութիւն, այն ներսիսեան անէծքն՝ որ զերկիր և զերկինս դողացուցին, և բոլոր մեր պատմչաց ողբոց աղբիւրք եղան: Արշակ ՚ի թելագրութեանց հայրապետին ամենեւին բան մը չզգայով՝ դարձեալ իր խողպատեան ձևն առաւ իր սամոյրովն, և հանդեցաւ ՚ի գահոյս:

Տիրիթ տեսնելով որ ցանկութեան առաջի արգելքն վերցաւ, սկսաւ ընդ փառանձեմայ բանագնաց ըլլալ, բայց ՚ի զուր. և այն ատեն արթնցաւ Արշակ իր մրափելէն, և տեսաւ որ անիրաւ էր սպանութիւնն և անօրէն. զղջաց և լաւացաւ Գնելայ դիական վրայ, և լացուց զբոլոր Հայաստան: Բայց ինչ եղաւ իր զղման արդիւնքն. միւս ևս սպանութեամբ պղծել զգահոյս. վասն զի երբ

իմացաւ որ Գնելոյ սպանութեան շա-
րեացապարտն էր ինքնին Տիրիթ՝ իր
միւս եղբորորդին, հրաման տուաւ
որ զայն ալ սպանենն . . . իսկ փառան-
ձեմ մնաց աւար Արշակայ. բայց ոչ իր
սրտին ուզածն էր, և ոչ իրեն հաճոյանալ
ջանաց, որով շուտ ուժացաւ նաև ան-
կէ, բայց չթողուց. այլ հնարեց ուրիշ կին
մ'ալ առնուլ իրեն, և խնդրեց գտաւ
կին մը 'ի Յունաստանէ, և 'ի կայսերա-
կան տոհմէն, ինչպէս կրէ բուզանդ,
որուն անունն էր Ողոմպի. բայց այս
Արշակայ փառանձեմն և Ողոմպին ալ
եղան իրեն Սառան և Ագարն. և յաղ-
թեց փառանձեմ՝ բայց անօրէն միջոցով,
և ոչ սոսկ բաժանմամբ 'ի միմեանց, Ուլ
էր այս յոյ կողակիցն Արշակայ, զոր
կրայն մերջ 'ի կայսերական տոհմէն, և
կ'անուանեն, Ողիմպի, Ողոմպիազայ,
Ղոմպիս. 'ի մերոց պատմչաց քիչ մը բան-
դիտենք, բայց օտարք աւելի մանր կը
պատմեն մեզի այս օրիորդիս ով ըլլան:
Մերով պ երէց կ'ըսէ այսպէս. «Արշակ
տեսեալ զատելութիւն իւր ('ի փառան-
ձեմայ), առաքէր 'ի Յոյնս և տայր բե-
րել իւր կին զքոյր թագաւորին Վաղե-
սի, որոյ անուն էր Ղոմպիս, և կապեաց
թագ ընդ նմա, և առաւել սիրէր զնա
քան զփառանձեմ, և փառանձեմ ոխա-
ցեալ էր ընդ Ղոմպիս ». իսկ բուզանդ
կ'ըսէ. «Իբրև կինն 'ի նա ոչ յանգոյց
զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ
յերկիրն Յունաց, և խնդրեաց էած ան-
տի կին 'ի կայսերական տոհմէն աղ-
զաւ, զի անուն էր նորա Ողոմպի ». իսկ
Խորենացին քիչ մը տարբեր կերպով
կ'ըսէ, թէ՛ սրբոյն ներսիս՝ «Երթեալ և
'ի հայտութիւն զթագաւորն շարժեալ
մեծարի 'ի նոցանէ յոյժ, նաև զպա-
տանդան խնդրեալ առնու և դառնայ.
և կոյս մի անուն Ողոմպիազայ յազգէ
կայսեր կին ածէ Արշակայ, Ստոնք են
մեր հնագունից խօսքերն, շատ տար-
բեր իրարմէ, միայն անուամբ միաբան:
Բայց տեսնենք ինչ կ'ըսեն օտարք ևս:
Աբլաբիոս (Αβλαβιος, Ablabius) ա-
նուամբ երևելի անձ մը որ ֆրիստոսի
331 թուականին բռնչել եղաւ, մեծա-

պէս պատուեալ էր 'ի կոստանդիանո-
սէ, զոր զովասանօր իսկ կը յիշէ Եւ-
նակիոս 'ի վարս Էդեսիոսի. որ թէպէտ
յանշուք ծնողաց և տեղի ծնած էր 'ի
Բիւզանդիոն թրակիոյ սահմաններն,
սակայն յամին 314 մինչև 'ի քաղաքա-
պետութեան պաշտօն բարձրացեր էր,
յառաջքան զօրեշխութիւնն զոր վարեց
ընդ Բասսոսի, և զրեթէ Մեծն կոստան-
դիանոս զինքն կեսար պիտի անուանէր:
Արդ կոստանդիանոս ընտրեց զԱբլա-
բիոս որ պատանի որդւոյն կոստանդիո-
սի ընկած գաւառները խնամակալէ, և
այս Աբլաբիոսի տղիկն որուն անունն էր
Ողոմպիազայ՝ իր որդւոյն հետ նշանեց՝
կոստասայ. և յետ հօրն մեռնելուն՝ կոս-
տանդիոս իր եղբայրն՝ տուաւ զաղիկն
Արշակայ մեր թագաւորին, որպէս զի
իրեն հետ բարեկամութիւնն աւելի
սերտ ըլլայ, Այսպիս կը պատմէ Ամ-
միանոս Մարկելլինոս լատին պատմիչն,
որ գրեթէ մեր նիւթոյն ժամանակա-
կից անձն է, և իր պատմութիւնն կը
բովանդակէ յամէն 352—378. Ահա
Ամմիանոսի խօսքերն. «Իբրև այսպէս ա-
մենայն ինչ յաղողակ և յապահովի կայր,
կոստանդիոս տայր առ ինքն կոչել զԱբ-
շակ զՀայոց արքայն, և մեծաւ առա-
տուութեամբ ընկալեալ զնա՝ խրատէր և
յորդորէր, զի կացցէ 'ի մերում մտեր-
մութեանս հաւատարիմ. քանզի լսէր՝
եթէ արքայն Պարսից նենդութեամբք,
սպասունալեօր և խաբէութեամբք գուն
գործէր ստեպ զի թողցէ 'ի բաց զմիա-
բանութիւնն ընդ Հռոմայեցիս, և ընդ
իւր կապեցի ուխտիք և երդմամբք:
Որ երդմնի լինէր ստեպ զի յանձն առ-
նու զկեսանս կորուսանել մանաւանդ-
քան զխորհուրդս զայս. և ընկալեալ
պարզեւ՝ ընդ որս եկեալն էր, դարձ
առնէր անդրէն յիւր թագաւորութիւնն,
և ոչ իշխէր երբէք այնուհետև զուխ-
տիւքն անցանել, բազմապատիւ աղեր-
սիւ սիրոյ յօղեալ ընդ կոստանդիոսի.
և յորս մեծ ևս էր այն՝ զի զՈղոմպիա-
զա զգուտոր Աբլաբիոսի երբեմն պոե-
տորի, հաստէր նմա 'ի կին, զխօսեալն
եղբոր իւրոյ կոստասայ: Եւ զնա յուղի

արկեալ 'ի կապապողովկոյ, ինքն ընդ ճանապարհ Մելիտինոյ փոքուն Հայոց և ընդ Լակոտեան և ընդ Սամոսատ, և անցեալ ընդ Եփրատ՝ եկն յԵդեսոսա...» քննելու քան, թէպէտ ոչ յայտնի, սակայն կը յիշէ և սուրբն Աթանաս 'ի թղթին առ Միայնացեալսն. ուր կըլտամբելով զԿոստանդինոս այն ըրած մեծ ոճրագործութեան համար կ'ըսէ. « և այսպէս ժպրհեցաւ (Կոստանդինոս) անիրաւել և յիւր եղբայրն. և զխօսեալն նորա զՈղորմախաղա ետ 'ի բարբարոսս 'ի կնութիւն, զոր ինքն մինչև ցմահն պահէր, և իբրև զիւր կին սնուցանէր »: Սուրբ Աթանասայ այս վերջի խօսքէն կը հասկըցուի որ այս Ողորմախաղա նորէն դարձած էր առ իւր խօսեալն. սակայն մերը միաբան կ'ըսեն, գոնէ հինք, որ փառանձեմայ նախանձուն գոհ եղած ըլլայ. վասն զի այս փառանձեմ' տարօնեցի Մրջիւնիկ կամ Մըրջմնիկ անունով երէց մը կաշառելով սուրբ խորհրդոյն ժամանակ սպաննել կարաց զՈղորմախաղա: Մենք աւելի հաւանական կը համարինք սուրբ Աթանասայ ըսածն, և չենք ուզեր այդչափ սոսկալի եղեռն կարծել, որ գործած ըլլայ փառանձեմ, և արդեօք սպաննելու հասնորք և միջոց կը պակսէր:

Բայց Արշակայ այնչափ գործած ուճիրները, գառն սպանութիւնքը, վերջապէս զսուրբ և զանխնջ ոգին Ներսիսի իրմէ հեռացուցին. և այն օժեալ բերանն որ խօսէր և բարբառէր 'ի գահ կաթողիկոսութեան՝ ալ լռեց. և չուզեց ևս տեսնել Արշակայ երեսն: Իսկ թագաւորն սկսաւ մտածել որ ուրիշ մը դէն փոխանակ Ներսիսի, և գտաւ Զունակ անունով մէկն, զոր կը կոչէ Բուզանդ. « ստրուկ 'ի ստրկաց արքունի »: Կանչեց զԵպիսկոպոստոսն որ ձեռնադրեն զսա, բայց ոչ դը տեղէն շարժեցաւ. այնպիսի ապօրինաւոր գործ մը ընելու, մինչդեռ սրբակրօն և հզօր կաթողիկոսն գեռ ողջ էր և 'ի Հայաստան. սակայն գտնուեցան ամանք յԵպիսկոպոսաց որ այս բանս առնուն յանձն, որ էին Աղձնեաց և կորդուաց

Եպիսկոպոսունք. և ուրիշ պատմիչ մը կ'ըսէ զձեռնադրողն՝ Եպիսկոպոսն Գառնոյ՝ Գէորդը, և Եպիսկոպոս Անձեացեաց Տաճատ, և Եպիսկոպոս Աղձնեաց՝ Սիմէոն. և այս երեքն ձեռնադրեցին զԶունակ կաթողիկոս, որով բոլոր Հայք, ռամիկք և իշխանքն ամենքն ալ թողուցին զԱրշակ, և Հայաստան գարձեալ չփոթ և խառնակ երեոյթ մ'առաւ, և կաթողիկոսական ակտուն ծածկուեցաւ 'ի լուսթեան. մինչև Արշակ Վանդաղար պատերազմներով ընդ Պարոս՝ մաշեցուց զՀայոց դիւցազունն, և անոնք միաբերան դիմեցին միւսանգամ առ Ներսէս՝ որ դարման մը մտածէ իր հնարագէտ իմաստութեամբն: Բայց մտեցեր էր Հայաստանի օրհասն. թշնամիք շուրջ առած՝ նենգութեամբ և խորամանկութեամբ կ'ուզէին կլանել զայն կենդանւոյն. մանաւանդ զրացին Շապուհ, որուն խաբէութեանցն որս եղաւ Արշակ, և այնչափ ոճրագործութեանց պատիժը լուծեց սարսափելի մահուամբ մը...:

Մինչդեռ ասոնք կ'ըլլային՝ Թէոդոս նստած էր 'ի կայսերական գահն. առ որ զիմեց սուրբն Ներսէս հաստատելու մէկ մը 'ի գահ արքունի Հայաստանեայց. ներկայացուց զՊապ՝ որ էր պատանդ 'ի դուռն, և շնորհեց առաքելի հայրապետին խնդիրն բարեբարոյ կայսրն Թէոդոս: Սակայն Պապայ օրօջն ալ երջանկութիւն պիտի չգտնար Հայաստան, այլ նոյն արիւնդույտ պատերազմունք պիտի շարունակէին երկու կողմէն ալ. ուր 'ի բազումն Ներսիսի բազուկքն և ալն կը զբաղէին օրհնելու զգէնս արիագունին Մուշեղայ, ահարոնեան և մովսիսեան բազուկքն կը հովանացընէր հայկական բանակաց վըրայ՝ որ յաղթող ելլան թշնամոյն: Որչափ որ պատերազմական քաջութիւնք և յաջողութիւնք կը գործուէին, սակայն արքունական գահն կը կրէր իւր վրայ անարժան գլուխ, վատ և կնամարդի, որ անազդ քան զԱրշակ՝ կ'արհամարհէր զգեղեցիկ թելադրութիւնս Ներսիսի. մինչև նաև մտաբերեց սոս.

կալի տէրին՝ մարեւու իսպառ Հայա-
ստանեայց վառվառն ջահն. իբրև ըզ-
սուրբն Ամբրոսիոս արգելոյր զՊապ՝ որ
չմտնէ յեկեղեցին իր պիղծ գործոցն
համար. ասկայն անմասն էր իւր հպա-
տակն քան զԱմբրոսիոսին. սորայն՝ հեզ
ու քաղցրաբարոյ ըլլալով՝ դիւրաւ ընկ-
ճեցաւ աստուածաստա գաւազանին
տակ. իսկ մերոյս հպատակն՝ պատրուա-
կեց զինքն, օձակերպ գալարեցաւ, մը-
թերեց 'ի սրտին սխա. և ձեացուց որ
մեծածհաց կոչուներով մը պատուէ զսուրբ
թովինն իւր և զխրատառուն. փոխանակ
ըմպելեաց՝ մատուակեց անձամբ պիղծ
թագաւորն գրածակն գառնութեան՝
սուրբ Հայրապետին, և կապուտակ նը-
շան մը՝ « բոլոր իբրև նկանակ » բռնեց
զսիրտն, վազեցին իշխանքն՝ որ անդե-
ղայս և թիւրակէս տան, սակայն անօ-
գուտ, զօրաւորագոյն գտաւ թոյնն քան
զանդեղայս, և թռուց զհոգի երանե-
լոյն յերկինս, և ամնյացուց զՀայա-
ստան բոլոր, և ոչ միայն զգահն կա-
թողիկոսութեան: Բայց փոխանակ ներ-
սիսի նստուցին յաթոռն յազգէն Ալ-
բիանոսի Գուսիկ անուամբ մէկն:

Չ. Սքանչելիք Ներսիսի և երկասի-
րոսքիւնք և Պատուիչք վարոց և ուրա.
— Շատ անգամ հնութեան սէրն նոր
կերպարանք սուած է և պատմական
գիպաց, և հաստատուն իրքն իբրև
նշանս և սքանչելիս կը նկարեն մեզ.
Բայց բազմագոյն ևս այն է, որ իրական
հրաչք և սքանչելիք գործած է Աստուած
'ի ձեռն սրբոց՝ որով յօգուտ ժողովրդ-
այոց շարժէ իր գորութիւնն և 'ի փրը-
կութիւն հոգւոց: Այսպիսի սքանչելիք
կը պատմուին մերոյս սուրբ և հրաշայի
Ներսիսի վրայ՝ թէ 'ի կենդանութեան
և թէ 'ի մահուն, մի քան զմի նաչխար-
հիկ և փառաւոր, Բաւական է միայն յի-
շատակել արքայանաց կողմոյն սքանչե-
լիքն, ուր ինքնին ձուկն և այլ կարեորք
ծողն կը բերէր իրեն և իրեններուն.
Ինքն բազուկներն ամբարձած՝ յաղողու-
թիւն կուտար յաղթողաց Հայոց և զթըշ-
նամիս պարտէր. ինքն իր անիծիւքն

զՈրչակաւանն պիղծ հիւանդութեան
ենթակայ բրբր էր զոր կը կոչեն ժաւնդ,
որով բնակիւքն կը մեռնէին. ինքն իբրև
գ'իսակիթ հալածէր միայն ներակայու-
թեամբ զդևս 'ի Պապայ թագաւորէն,
կարծէր էր աստուածային ուժովն յան.
կարծօրէն կապել կաշկանդել իր թըշ-
նամիքն կամ աղօթիւք աստակել. այս
պիսի դէպք կը պատմեն մեր ձեռագիրք
սրբոյն Ներսիսի համար. որ երբ կա-
թողիկոսութեան ակտուն նստաւ ըստ
օրինի եպիսկոպոսաց և պատրիարքաց
պարտական էր ստորակարգ եկեղե-
ցեաց աչք մը տալ և տնտեսել. օր մ'ալ
գնաց նոյն պաշտամամբն 'ի Գուսիկ
գիւղաքաղաքն՝ զոր կ'աւանդեն թէ Տրբ.
դաս և սուրբն Գրիգոր շինել տուած
ըլլան, և հոն գտաւ, կ'ըսէ պատմիչն,
« զսուրբ նշանն Սեղբեստրոսի ». և
Պենտեկոստէին օրն թափօր բնելով խա-
չիւ և աւետարանաւ, ձայն հասաւ ի-
րեն որ մօտաւոր արբեր վրայ աւազակ-
ներ պահուրտած են և կը պատրաստին
յարձըկել 'ի վերայ քահանայից և յա-
փըշտակել զսրբութիւնն. այն ատեն
սուրբն Ներսէս իր ձեռաց հրաշագործ
խաչովն ելաւ բլրան մը վրայ և հօն ա-
ղօթեց որ Աստուած զթշնամիս ցրուէ.
և ահա յանկարծ խաչին թներէն հով
մը ելաւ սաստիկ, և աւազակաց պա-
հուրտած տեղերուն քարերը վրանին
փլուց ու հօն թաղեց զամենքն: Սրբոյն
Ներսիսի վրայ պատմուած հրաշքներն
գրեթէ ամենքն այլ այս ոճը ու կերպա-
րանքն ունին. իսկ այս Սեղբեստրոսի
խաչն երկակն ժամանակ պարտած ըլ-
լայ կ'աւանդի 'ի Հայաստան, և կ'ը-
սուի թէ նոյն խաչն ըլլայ՝ որով Պետրոս
գետադարձ կաթողիկոսն հրաշագոր-
ծեց 'ի վերայ ջրոյն. իրմէ անցաւ յայլս,
մնաց քիչ ժամանակ Արշակունեաց իօ-
րաձոր վանքն, անկէ Ատոմ վանա-
հայրն առաւ ուր և գերութիւն և քր-
սոր կրեց սուրբ խաչն, և յետ այնր
դարձաւ 'ի Չագապանք 'ի գաւառն կու-
տեուց. . . Սակայն 'ի մահուն աւելի ե-
ղան սրբոյն Ներսիսի հրաշքներն. քա-
ռասուն օր լուսեղէն սիւնն ժածանեցաւ

իր գերեզմանին վրայ, և յորմէ ք բա-
զում բժշկութիւն լինի» կ'ըսէ, ք և առ-
նուն հող 'ի գերեզմանէ նորա, և բու-
ժին յախտէն՝ զոր ժանդ անուանեն . .
և հող գերեզմանի նորա բժշկէ զժանդ
և զփողացաւ և զամենայն վէրս մար-
դոյ և անասնոյ »: Երեսուն և չորս տարի
հայրապետութեան ժամանակ կու տայ
սրբոյն՝ Մեսրոպ երէց, զոր և համարի
միանգամայն վրաց հայրապետ . իսկ իր
մահուընէն ետքը, կ'ըսէ, « մինչև
ցայտոր ոչ դադարեաց խոռվութիւն և
այստերազմ՝ յերկրէս Հայոց և վրաց »:
Սուրբ Ներսէս իրեն մասնաւոր գրուց մը
ունէր կալուած՝ Ամօքն անունով (Բու-
ֆանդ, Չ, 7), ուր թագեցաւ Առոստամ
հոռոմ փաւստոս եպիսկոպոսին եղ-
բայրը, բայց ինքն Ներսէս թագեցաւ 'ի
թիւն աւան, 'ի մեծ եկեղեցունչ. և ութ
տարի ետքը, յետ որոյ Հերակլ կայսր
գնաց ընդգէմ Պարսից, Աբդուահիմ
Մահմետի քեռորդին տասն և ութ հա-
զար զօրքով վագեց Հայաստան, Տա-
րօնոյ քրիստոնեաներն թրէ անցընելու
համար, աւերեց տիրեց Հարթայ, Բա-
սենոյ, վրաց և Չաւախաց, վանանգայ,
և հարկ և աւար ժողուելով դարձաւ
անօրէնն 'ի Տաճկաստան, ահա նոյն
տարին զանազան եկեղեցիք կործանին
'ի Հայս, նայնպէս և եկեղեցին կաթողի-
կէ որ 'ի թիւն, որով և գերեզման Սըր-
բոյն Ներսիսի կ'անցայտի: Բայց սրբոյն
մահուընէ 872 տարի ետքը, 'ի թուա-
կանին Քրիստոսի 1275, փետրուար
ամսոյն առաջին օրն, Ղևոնի թագաւո-
րութեան ժամանակ յայտնուեցան իւր
աստուածագրոյմ և սուրբ նշխարքն
'ի թիւն Սուրբ Հայրապետք եկեղե-
ցոյն մէջ, սարկաւազի մը յայտնե-
ցաւ տեսիլքն որ կոչուէր Պատուական.
որ առաջին տեսիլքն ունեցաւ յանուարի
ամսոյ 26, հինգշաբաթի գիշեր մը: Այն
ատեն Եկեղեաց դատարին և Եզնկայի
Արքեպիսկոպոսն տէր Սարգիս, սահմա-
նեց որ ամեն տարի կատարուի սրբոյն յի-
շատակն և նշխարաց գիւտն խորհրդա-
կան երգովք շարականաց և ներբողական
ճառիւ: Այսպէս փառաւոր հանդիսիւ

կատարուած է միշտ և ցարդ կատա-
րուի սրբոյն Ներսիսի տօնախմբութիւնն
'ի բովանդակ եկեղեցոյն Հայոց, պատ-
կառելի և սիրազեղ զթով՝ ճաննալով
'ի նմա Տշմարիտ հայր և հոգևոր տե-
սուչ հոգւոց:

Չօրաւորն 'ի բան և 'ի գործ, կատա-
րեալ այիարհակալն հոգւոց՝ չէ թողու-
ցած մեզի մասնաւոր երկասիրութիւն
մը իւր մտաց և գրչի արդիւնք - առ-
կայն կարելի է մտածել որ հայրա-
պետ մը ունեցած չլլայ վերաբերու-
թիւններ ընդ թագաւորս դրացիս,
ընդ իւր ստորակարգ եպիսկոպոսունս
և ընդ բոլոր ազգին՝ զանազան առիթ-
ներով: Բայց այս տեսութենէս բան
մ'ալ աւելի կ'ենթադրենք, որ սուրբ
հօրս արդիւնք եղած է մեր Մաշտոցն,
չըսեմ նաև Պատարագամատոյցն և ժա-
մագիրքն, այնպիսի մատենաք որ միակ
կարևորք էին յամենայն ժամանակի. կը
յիշէ Բուզանդ, որ Սուրբն Ներսէս 'ի
սպանութեան Գնելոյ առաւօտեան ժա-
մերդութիւնը կը կատարէր, և Մես-
րոպ երէց կը յիշէ թափօր խաչիւ և ա-
ւետարանաւ. կրնանք համարել միան-
գամայն որ Սուրբն Ներսէս իրեն զՍ-
Բարսեղ յարգարած ըլլայ զեկեղեցա-
կան մատենանս ըստ մասնէ: Վկայէ
ինքն Մեսրոպ, որ մեր Մաշտոցին քա-
հանայաթաղն թղթքն և հրատարա-
կանքն՝ այն խօսքերն են զոր արտաբե-
րեցին երջանիկ շրթունքն հոգիացեալ
մարմնոյն Ներսիսի 'ի ժամ արբման բա-
ժակին: Երկարատև ազգութիւն մը
ունեցաւ թոյնն 'ի նմա, և ըբաւ առ-
նախարարս այն սրտաուռչ հրաժեշտն՝
զոր կ'ընթեռնուէք յիւր աչակերտին
գրուածս. կը դարձընէ սիրտն առաւել
քան զայն՝ առ շրջակայս և կ'ըսէ.
« Ողջոյն ձեզ դասք քահանայից, ողջոյն
ձեզ կարգ սարկաւազաց, ողջոյն ձեզ
մանկուրք սուրբ եկեղեցոյ, ողջոյն ձեզ
հաւատացեալ եղբարք . ողջոյն ձեզ
գունդք զինուորաց. ողջոյն ձեզ համօ-
րէն ազիւք. ես ճանապարհորդեցի առ
արարիւն իմ. թողի զամենայն զկեանս
իմ, և թողի զժառանգութիւնս իմ, ըստ

հրամաննի քում գարձայ 'ի հող յորմէ ստեղծայ, Ահա հրաժարիմ' ի քէն սուրբ եկեղեցի: Ահա մեկնիմ' ի ձէն՛ջ սիրելի եղբարք, 'ի կոչումն ֆրիստոսի Աստուծոյ մերոյ » . . . Այս ողորմն են գորս կ'արտարերէ ցարդ հանգուցեան 'ի ֆրիստոս' բերանով քահանային, որով Մաշտոցին գեղեցիկ դրուագ մը իր մասերովն անկէ առնուած է: Բայց մարդկային միտք շատ անգամ եղածովն գոհ չըլլալով, կը սիրէ և կ'ախորժի նաև յաւելուլ և բարդել. այսպիսի գրուածներ ալ ստեղծած է մեր պատմութիւնն վասն սրբոյն Ներսիսի. ինչպէս Մեթոտիոս պատարացի, և Ագա, դրոն մը 'ի մեզ, և Հիպոդոդիտոս մը գրած ըլլալնին կ'աւանդուի, Նեոխն և վերջին գայտեան համար և կատարածի աշխարհիս, ոչ ինչ նուազ գրութիւն մ'ալ մերքն կու տան Ներսիսի, որպէս թէ 'ի կատարած կենացն խօսած ըլլայ Հայոց ազգին կատարածին վրայ և Նեոխն. և այս պատմողն և մանրամասն գրողն է ինքն Մեսրոպայ երէց վայելաբան ոճով պատմին, որ և կ'ըսէ թէ 'ի սրբոյն Գրիգորէ Հայոց Լուսաւորչէ մինչև իմ' օրերս կ'ըլլան 416¹. և կը յաւելու ևս որ սթ'յն Ներսիսի մահուանն առաջիկայ գտան երկուք ումանք Մեսրոպայ և Եպիփան' աշակերտք սրբոյն, որ և զՀայ գիրն

գտան: ինքն Մեսրոպայ հաւատարիմ է քան զամենայն պատմիչս' որ զսրբոյն Ներսիսէ կը ճառեն, և որ այսպէս կը կնքէ իր պատմութիւնն իւր յիշատակարանան. « Իս Մեսրոպայ մեծ ցանկութեամբ ծաղկաբաղ արարի զգիրս զայս 'ի Հայոց մնացորդաց, յարևելից գրոց, զյաղթութիւն և զվատթարութիւն թագաւորացն Հայոց և վրաց, և զառաքինութիւն և զքրանչելիս հայրապետաց տոհմի Գրիգորի Լուսաւորչին, և զտեսիլ և զկտակ սրբոյն Ներսիսի, և զքաջութիւն և զյաղթութիւն արիական ազգին Մամիկոնէից . . . »: Բայց ոչք են վերոյիշեալ Հայոց Մնացորդք, և Արևելից գիրք զոր կ'ըսէ Մեսրոպայս: Բարձաւ և կործանեցաւ Արշակունեաց գահն զոր սպառնացեր էր սուրբն Ներսէս 'ի կտակին, և 'ի Հայաստան սկսան անսպառելի պարսկական մոլեգնութեան կռիւններն, որով աւերեցաւ և խոպանացաւ բոլոր Հայաստան:

¹ Այս Թուականն կ'երևայ թէ ըստ հայկական տոմարին նշանակուած ըլլայ 'ի ձեռագրաց վասն զի Սրէցն Մեսրոպայ շատ վերջ կ'իյնայ ժամանակաւ քան զՍ. Մեսրոպայ գրիչ գրոյս:

Հ. Ա. ՍՈՒՐԵԵԱՍ

